Չզգացումներով, որ ներշնչվել են գեղով,
Բարձր, վրսեմ ձգտումներով տողորված
Մի սիրտ զգայուն, որի կազեր սիրազգաց

Ենմեկնեղի հրմայքով են սըքողված:
 Ես աննում եմ հողի հրպարա, սիրալիր,
 Որ ուրիշի տանջանքին է ուշադիր,
 Որ մեծ կամքով գիտէ չարը հալածել
 Եւ արգարը սիրաբորբոք միշտ պաշտել:
 Ես ըզգում եմ կախարդական դաղանիքը,
 Որ կրում իր մէջ արդարասէր թարմ կեանքը,
 Հրապուրանքն ըսքանչական յոյսերի
 Եւ զմայլումը սուրբ սիրոյ ու հաւատի:
 Յափշտակված դրանց զիւթական հրմայքով,
 Ոգևորված չնաշխարհիկ դրանց ուժով,
 Չեմ կարենում քաղել միտքս այդ պատկերից,
 Չեմ կարենում հրաժարվել այդ աշխարհից:

Սակայն աւանդ, երկարաժամ չէ լինում
 Յափշտակութիւնս իմ այդ, իմ այդ ըզմայլում:
 Ինչպէս օձի խայթոց ցաւոս, թոյնալիր,
 Ուրիշ մտքեր խոցում կուրծքըս տանջալիր:
 Մարդիկների զրպարտութիւն, բամբասանք
 Հարածանքի էր մատնել նրա սիրտ ու կեանք,
 Եւ օրերը թունաւորում էին նրա,
 Թունաւորում արգեղաբար, անխրնայ:
 Չհասկանալով նրա կոչում ու իղձեր,
 Նրան պատճառում էին տանջանք ու վշտեր
 Եւ նրա անուան անարատ ու սիրական
 Գրոշմում էին կնիքն իրանց չարութեան:
 Օ, այդ ժամին զայրոյթն ու մաղձը լեղի
 Բորբորում էր սիրտս ու հողիս կատաղի,
 Բարկութեանըս ինձի որտան էր խեղդում
 Եւ թոյն, և մահ գողգոջ շրթնումըս կռում: ..

Բայց ահա դու, ո՞վ մըտերիմ իմ կեանքիս,
 Որպէս թնդող ամպի ետից ծիածան,
 Յասմանս ժամին յայտնվում էիր իմ աչքիս
 Եւ հայեացքը մեղմիչ, հրալիր, աննրման,
 Ինչ-որ անյայտ մի զօրութեամբ ներշնչված,
 Հանդարտեցնում էր իմ կուրծքս փոթորկված:
 Եւ այդ ժամին թըւում էիր ինձ մի վարդ,
 Սխալմամբ անկած մարգագեանում մէկ անդարդ,
 Նրա անդարդ ծաղիկների շրջանում,
 Քամուց, բրբից անպատըսպար ու արտում,
 Յօղերն փայլում վրան ոչ իբրև աղամանդ,
 Ելլ արտասուք, արտասուք դառն ու հիւանդ:
 Մենակ ու զուրկ իր նմաններից, զլիկիր,
 Մենակ, ինչպէս երկնի ասաղը գեղավառ,
 Յանձնված քամու քմահաճոյքին կամակոր,
 Հող, օդ ու ջուր բոլորովին նրան օտար:

31 հոկտեմբեր, 1887.

* * *

Եյն, երջանիկ ենք մենք, իմ անդին.
 Սիրոյ մեղմանինջ հովանու տակին
 Զգում եմ հանգստի սփոփիչ մեղմութիւն:
 Մեան գեղ հրեշտակի թրուիչին սահուն,
 Մեան նրա նըւագի քաղցրալուր ձայնին,
 Հողիս օրօրվում շքեղ ամպային
 Ելիքների վրայ, նուրբ, մեղմ մրմնջում
 Սէր, բաղդ ու անուրջ և կամաց նիրհում:

Ե՛յո՛ սրտակից, երջանիկ ենք մենք...
 Երջանիկ... Փռւչ ձայն ... Երգեօք խաբւում չի՞նչ...
 Եւ բազում քո պարզ արցունք չեն ցամքել,
 Իսկ ե՛ս...: Թախիժ ու տանջանք են եղել
 Իմ կեանքիս բաժին... Երջանիկ... Իսկ շուրջ,
 'Սայիր, — մարդկանց մէջ վատ է, դարչ ու փուչ...
 'Ղրանք մեզ եղբայր են ... Ո՛չ, ո՛չ, հանրական
 Սրգոյ ժամանակ չկայ բազդ անձնական:

30 Մայիս, 1887.

ՅԷՎԱՐԻ *)

Յուրա զիշերով մեծ Մասիսի ստորտին
 'Նա ընկած էր մէն, ծանրաշունչ ու լռին:
 Խիտ խաւարը ծանրանում էր երկրի վրան,
 Սև ամպերը գիզված էին սոսկական.
 Շուրջ ամեն բան լռութիւնն էր գրկած,
 Լոկ երբեմնն անքում քամին դադարած:
 Եւ նա ընկած մեծ Մասիսի ստորտին՝
 Մէն, անպաշտպան աւանդում էր իր հոգին:
 'Նա ծերուկ էր. բացի ցաւոտ փորձերից,
 Հոսած դառն արցունքներն էլ կնձռալից
 'Վարձրել էին նրա թոյլ, դժգոյն պտերը,
 Խաւարացրել նրա արծիւէ աչքերը.
 'Նրա կիսամերկ մարմնի վըրայ լի էին
 Վէրքեր, որպէս օձի բոյներ մրթաղին.

*) 'Ատնթաց օրը, накануне, la veille — երեկոյնների բարբառով:

Եւ տանջալի ճղնաժամի սուր դողոց
 'Նրա մարմինը ձգձրգում էր, անյայտ բոց
 Սարժես նրա կուրծքն այրում էր ու լափում
 Եւ այնտեղից խոր անքոցներ դուրս հանում:
 Ինչո՞ւ համար մինաձգտիչ ցնցումներ
 'Նրան չարչարում, նրան տանջում են մահաբեր:
 'Նա մեռնում է: Ինչո՞ւ համար. ո՞վ է նա:
 Եյդանդ կայ վրէժ, հալածանք կամ թէ մարտ կայ,
 Եւ նա ինչո՞ւ մէն, մերձ խմահ, վշտագին, —
 Թշուառ, — անյայտ է ու անձանաչ ամենքին:
 Ո՞վ է նա... Ո՛հ, մի հարցնէք թէ՛ ով է նա.
 'Վառնակսկիժ յիշատակներ բացում դա,
 Որոնք, ինչպէս դանդաղ սպանիչ հրդոր թոյն,
 'Նրանից խլել են հանգիստ, յոյս, կեանք ինքնուրոյն:
 'Նախահայրերն նրա երբեմնն մեծ էին,
 Ի՛այց մեծութեան մէջ նրանք թըրշուառ միշտ էին.
 'Նրանք կորցրին իրենց այդ դու մեծութիւն,
 Թըրշուառութիւնն իրենց արին կտակ որդուն:
 Եւ նա աճեց, տարիք առաւ՝ միշտ թըրշուառ.
 Եւ ծեծված ու վիրաւորված անդադար,
 Եւ վատերի ձեռին անչափ չարչարված,
 Եւ վատերով թքնված, կոխված, հալածված, —
 'Նոյն վատերի դարձաւ ըստրուկը դժգոհ,
 'Նոյն վատերին մի՞թէ կերթայ նա խեղճ գոհ:
 'Նա ծերուկ է իր ալեղարդ մարդերով,
 'Նա ծերուկ է իր ջարթըւած, թոյլ մարմնով,
 Իր ցաւերով ու փորձերով դարաւոր,
 Ի՛այց մատաղ է նա իր հոգով սրգաւոր,
 Օգացումները նրա մէջ վառ են, կենդանի,
 Եր'ւակայ՝ թիւն նրա լայն թախչներ դեռ ունի

Եւ մեծ ոյժեր կան հողեկան նրբանում...
 Ե՛հ, ո՛չ թէ մահ, նա ապրել է դեռ ուզում:
 Ո՛չ, ո՛չ, մի մահ ստրկական ու անխժված,
 Երբ նեխվում է նա ազրի մէջ ընկրուզված,
 Երբ շղթայված նրա ձեռներից արիւնը
 Ծոր-ծոր հոսում, մինչդեռ իր դեղ զարուներ
 Գեռ չէ եկած... անարդ, տրդեղ մահ այդպէս
 Նա չէ ուզում... Ե՛հ, ըղձած կեանք, դու ո՞ւր ես...

Եւ նա ընկած մեծ Մասիսի ստորոտին՝
 Մէն, անպաշտպան աւանդում էր իր հողին...
 Բայց այդ ի՞նչ է, նա շարժվում է անքալով
 Եւ թուլացած իր ձեռները դողալով
 Գէպի առաջ կարկառում,
 Կարծես այլև ձեռներ լինի աղաչում:
 Նա թեւերը բարձրանցնում է աւելի,
 Մինչդեռ շղթան հանում ձայներ սոսկալի.
 Եհա և խուլ մի անքոյ,
 Եհա մի խիստ սարսրոց,
 Եհա ցնցված՝ նա իր գլուխը բարձրացրեց...
 Ե՛հ, գրուխ վե՛հ, սիգապանծ,
 Մի՞թէ բազրը քեզ մինչ այդտեղ հասցրոց,
 Որ դու հրպարտ, խրոխտապանծ
 Ձեռ կարենում բարձրանայ
 Քո թշնամուղ սոսկում տալ...

Սակայն ահա նրա մութ, պղտոր աչքերը
 Ձիգ դիտում են խիտ, ահալի խաւարը—
 Չորս կողմ լռին, չորս կողմ անմարդ, անապատ...
 Մըթազնեցաւ նրա ձակասը սրգապատ
 Եւ առաւել արկարացան ծերուկի
 Թոյլ ձեռները և կախվեցան չոր մարմնի

Սողերովը մերկացած՝
 Շղթաներով ծանրացած,
 Գլուխըն ընկաւ դեռնի վրան,
 Ելաւ հառաչ չուտահան...

Նորից չորս կողմ լռութիւնը ծանրացաւ
 Եւ կարծես թէ խաւարն աւել սաստկացաւ...

«Ե՛ր, կեանք, ի՛մ կեանք, դու ո՞ւր ես»...
 Յանկարծ դոչեց ծերունին,
 Շղթաներըն ուժգնապէս
 Զարնբեցան մերկ դեռնին
 Եւ վեհ գլուխը բարձրացաւ,
 Արկին ձեռներն մեկնվեցան
 Եւ խաւարում նա բսխաւ
 Փնտռել իրեն մի պաշտպան...

«Օ սուէք ինձ կեանք»—դոչեց նորից,—«կեանքն ըղձած»...
 Յանկարծ լռութիւն մեռելային... Շատ հեռւում ամպամած

Մի խուլ որոտ գահեցաւ
 Եւ երկնքում թաղվեցաւ...

Թնթունդ ելաւ գոռ Մասիսի զազաթին,
 Յանկարծ վեր վար փայլակները սրլացին,
 Մութ ամպերով վեհ ծերունին պատվեցաւ
 Եւ մի չքնաղ կոյս՝ ձեռին սուր ու դրոշակ՝

Նրա յանդիման յայտնվեցաւ:

Եւ բարբառեց կոյսն այս հնչին յարգորակ—

«Արիացի՛ր, թըշուձ, անտէր ծերունի:
 «Եթէ օտարն անգըթաբար ճնշեց քեզ,
 «Եթէ նա քո կուրծքըդ ջարթեց, սրգալի
 «Վարձրեց օրերդ մշտապէս.

«Եթէ իղձրդ, լացրդ, քաղցրդ ու ճիւղդ

«Անգիտացաւ նա, տալով քեզ նոր վերքեր,
 «Եթէ սիրած քո հայրենի հողերըդ,
 «Քեզնով ցանած, քեզնով մշակած սուրբ վայրեր,
 «Նա քեզ համար դարձրեց մոլթ բանդ, աքսորանք,
 «Խրքեց քեզնից քո իրաւունք, ձայն ու կեանք,—
 «Թո՛ղ նա զիտնայ, որ կայ նոյնպէս ուրիշ ձայն,
 «Որին ոչ ոք երբէք յաղթել չէ կարող,
 «Որ զո՛հ չի գնալ վատութեան ու բռնութեան.
 «Նա միշտ հըպարտ, միշտ վըսեմ է ու յաղթող
 «Եւ մշտական լոյս շողշողում նրա վըրան:
 «Նա—պանծալի արդարութեան է մեծ ձայն...»

«Ահա՛նքն ես ուզում ըզձալի

«Եւ պատրաստ ես յետին ոյժերդ կենդանի
 «Ի գործ զընելդ—դէհ, քո ձեռքդ ուզում եմ,
 «Որ քեզ ոտի կանգնեցնեմ,
 «Որ քեզ ես շունչ պարզեւեմ,
 «Երանութի՛ւն աւետեմ»..

.

12 Սեպտեմբեր, 1886.

ՆՐԱՆՑ ԺԱԿԱՏԱԳԻՐԸ
 (Ը.Պ.)

Փոխադարձ սիրոյ շղթայով կապված,
 Ոչինչ չը զատեց նրբանց միմեանցից:
 Պաղ մահը եկաւ և նրբանց զըտաւ

Սուրբ գործի դաշտում ձեռ ձեռի տըւած:
 Անդուժ մանդաղով քաղեց նրանց դաշտից
 Եւ գերեզմանի խաւարը տարաւ:
 Սառ հըզումն էլ նրանք մէկտեղ յայտնվեցան:
 Անցան տարիներ... Աարմիր բացվեցան
 Երկու պերձ՝ ծաղիկ նրանց շիրմի զլիւին,
 Երկու գեղ թռչնակ զովասուն գարնան
 Նրանց մեղեղիով այցելում էին,
 Մարդիկն էլ յիշում էին անբաժան
 Նրանց անուն ու գործ և նրանց կեանք տաժան:

29 Մարտ, 1889.

Ա Ր Ծ Ի Ի Ը

Եւ անյաղթ, և հըպարտ արծիւը սըրտանս
 Թռչում էր աշխարհիս մի երկրից միւս երկիր.
 Մերթ երկնի խորերում մի սև կէտ էր ասես,
 Մերթ ամբողջ թաղվում էր ամպերում սոսկալիւ:

Մերթ նրա տակը հըսկայ ծովըն էր մթնանում,
 Մերթ նըսեմ լեռների ակռաները ցըցված՝
 Իբր ցատումը հողի լինէին նրան ուզողում,
 Մերթ վուլկանը ժայթքում էր լաւան կատաղած:

Ի՛այց արծիւը հըպարտ գեղալանջ, լայնաթև,
 Իբր համաշխարհային թաղաւոր մեծափառ,
 Խիստ նայեացք էր գըրցած հողի վրայ՝ ցած, ներքև,—
 Երհամարհանք նրանում, ատելութիւն էլ կար:

Ահա՛ ցածր... դա մի մեծ երկիր է բազմաշխատ.
 Նա փառքն իր մեծաշուք ձեռք բերել զնով արեան,
 Երիւնով է բացել ճանապարհ գէպի բազրի,
 Երիւնով էլ կհասնէ հանուր երանութեան:

Մէկ այլ տեղ՝ այլ երկիր, զխուժութեամբ ծանրացած,
 Յառաջընթաց գրոշակն ծածանվում վհարար,
 Ուժեղը արկարին ճնշում է կատաղած,
 Տրկարըն ուժեղի գէմ ելած մարտ արգար:

Ահա՛ և երկիրը խեղճութեան ու լացի,
 Խուր խաւար անկիւնից անբոց է դուրս ելնում,
 Երկաթէ հարուածից արիւնըն անմեղի
 Հոսում է, ճմարտի ձայն անիրաւն խըցնում:

Հողագնտիս մէկ այլ շրջանում այլ մարդիկ
 Խառնիխուռն գնում-գալիս, իբր անխոնջ մըջիւններ.
 Այս երկրում օրհասի լավում է սպառնալիք,
 Այն երկրում սանդուղաքով բարձրանում գէպի վեր....

Եւ արծիւն սաւառնում, երկիրներն այդ զխուժ,
 Եւ նրա մեծ աչքերը փայլփրում բոցավառ,
 Մինչդեռ սիրտը նրա գէպ այլ տեղ սըլանում,
 Վէպ ուրիշ հեռաւոր անտառներ, շէն ու սար:

Հէնց այնտեղ՝ այն երկրում մի բարձրը, գոռ լեռի
 Վէս, խոժոռ ժայռի տակ, քարանձաւում նըսեմ,
 Որ զրկված ամպերով՝ համբուրվում նրանց հեռ լի,
 Նա ծընվել է մէկ օր կայտառ ու զուարթադէմ:

Վաղուց էր չէր տեսել իր երկիրն հարազատ,
 Վաղուց էր, որ նա չէր սաւառնել նրա վրայով.
 Եւ արծիւն ըշտապում, սըլանում էր ազատ,—
 Վէթ զարձեալ մէկ անդամ նրան այցել ժրպիտով:

Սըրաթեւ նա հասաւ... Նրա գլխին երկինքը
 Մուլթ, խոժոռ ամպերով լիովին էր ծածկված,
 Լեռներն ըսպիտակ սաւանի իսկ տակը
 Պարծես ընդ միշտ թաղված՝ թըմրած էին մեռած:

Հովհաներ ու դաշտեր, անտառներ ու ձորեր,
 Քաղաքներ ու գիւղեր—բոլորը ցիր ու ցան,
 Ասես, աւերակներ անկենդան ու անտեր,
 Ասես, շերմաքարեր մի երկրում չուառական:

Մի շնչող էակ էլ բնաւ չեղաւ երևան.
 Հարազատ իր երկրին տիրած էր միայն սառ.
 Մեռելութիւն, խաւար, որպէս մեծ գերեզման՝
 Մուսլ երկնակամարն էլ նրա տապան.—սե՛ աշխարհ...

Այդպէս գտաւ արծիւը հայրենի երկիրը...
 Ճմրուեց գոռ սիրտը, թևերը թուլացան,
 Ուժասպառ նա եղաւ, մթնեցան աչքերը,
 Երցունքի այրող շիթ կաթեցաւ հողի վրան:

Նա նզովքի հայեացքով երկինքը նայեցաւ,
 Աղէխարչ հառաչով նորից շուրջն աչք ածեց,
 Թափ արեւց թևերը, գլխիվայր գլորվեցաւ
 Եւ խաւար վհի մէջ յաւիտեան նա թաղվեց:

17 Փետրվար, 1886.

ԱՂՔԱՏԻ ԲԱԺԻՆ

Ձիւնը գալիս է խիտ-խիտ օրնիբուն,
 Վետինը ծածկում սպիտակ ու սիրուն,
 Սուր քամին փրչում հիւսիսի կողմից,
 Սառցյցով կապվում գետերն գոչալից....

Ե՛հ, դու կեանք անդուարթ, աղքատի բաժին,
Օրծաղի համար չես տրված մարդին:

Մի խուլ փողոցում աղքատ, թըշուառ կին
Մէկ տան դռնի մօտ, երեսան կողքին,
Վանգնած էր դողդող, ահա երկու օր
Մանուկն էլ ինքն էլ քաղցած, սըղաւոր:
Մի սև դրամ էր լոկ նրա խնդրածը.—
Հաց տայ աղջկան, կրտէ նրա լացը:
Սակայն մեծ ցրտից փետացած ձեռում
Ողջ երկու օր նա կուէ՛կ չէր տեսնում...
«Մայրի՛կ, քաղցած եմ... Մայրի՛կ, հաց տուր ինձ»...
Մամիջում էր միշտ աղջկը ցաւից:
Սարսուռ էր ծագում խեղճ կնկայ մարմնում
Եր երեսայի խօսքերից արտում:
Խոր ընկած ու մութ աչերից տաք-տաք
Երցունք էր վազում հէնց այդ ժամանակ...
«Հիմն, զաւակըս, հիմն... ըսպասիր»...
Երտասանում էր մայրը զըթալեր
Եւ իր աչքերը դէտուդէն դարձնում
Թէ արդեօք մարդ չէ՞ իրենց մօտենում:
Բայց անցորդը շուտ գընում առջևից,
Զըսելով կնկայ ձայն աղաչալից.
Հառաչ էր ելնում աղքատի կրճքից...
«Ե՛կ գիրկըս, որդիս»... և ցնցոտից
Սարկրտած շորով նա փաթաթում էր
Իր գրկում աղջկայ սառած ոտիկներ...
Եւ ժամ էլ անցաւ... Լուռ է երեսան.
Եչերը փակած, գրկում մայրական

Սարծես անուշիկ քրնով ընկղմված,
Նա մերթ լոկ հառաչ է հանում կամաց:
Մայրն՝ ուրախացած որ քնեց իր որդին,
Շոյում էր այն միտքն, թէ հէնց այդ ժամին
Նա գէթ կը ստանայ անցորդից կուպէկ,
Եւ միշտ իր ձեռն էր մեկնում ահաբեկ...
Զիւնը թափվում էր նրա գլխի վըրայ,
Յուրան էլ ոտները սառեցնում անխնայ,
Մանուկն էլ կրտրեց իր հառաչները,
Նա լուռ է—մոռցաւ իր մեծ ցաւերը:
Իսկ մօր հրճուանքըն անչափ է ու մեծ.—
Բարի մէկ անցորդ հի՛նգ կուպէկ տըւեց...
Երեսան գրկում՝ շտապում, հաց է գնում,—
«Չարթի՛ր, աղջիկըս, հաց տամ»... մրմնջում...
Բայց որդին լուռ է, ոչինչ չէ լըսում:
Մօր սիրտը սաստիկ բաբախել ըսկսում...
Չարթի՛ր, աղջիկըս»... ձայն տալիս մայրը...
Սակայն խորին է մանուկի քունը,
Նա էլ չէ՛ լըսում ձայն զորովալից.—
Քնած է յաւիտեան, սառած է ցրտից...

Զիւնը գալիս է խիտ-խիտ օրնիրուն,
Գիտինը ծածկում ապիտակ ու սիրուն,
Սուր քամի փրջում հիւսիսի կողմից
Սառոյցով կապվում դեռերն զոչալից...

Ե՛հ, դու կեանք անդուարթ, աղքատի բաժին,
Օրծաղի համար չես տրված մարդին:

* * *

Վայլեր, թափառող, մշտաշարժ քայլեր,
 Ուր էք ինձ տանում, ուր ինձ քարշ տալի...
 Շուրջ՝ տարածութիւն մեծ ու անեղեր,
 Շուրջ՝ հօրիզօնըն անտեսանելի,
 Ասացէք, ուր պիտ հանենմես մէկ օր.
 Բղձած նպատակիս, բաղձիս ցանկացած,
 Թե յոյսերս մարած, հօգիս էլ անդօր,
 Ինչպէս մի պըտուղ քամուց չորացած,
 Արնինեմ. և յետոյ, թըշուառ մուրացկան,
 Աղէխարշ խօսքով, բողբօղ անյաղթ՝
 Մարդկային կեանքից, կեանքից չուառական,
 Որ խընց ինձնից, կախարդանք այնքան,
 Արմուրամ նպատակ, կըմուրամ ինձ բաղդ:
 Ասես թէ զրդված ուժով անսասան,
 Առխում էք գետին, մոնում անդունդներ,
 Ուր խարխափում էք ճըճիի նըման,
 Աւ կամ իբր արծիւ ելում ահեղ լեռ,
 Որտեղ սողում են ամպեր մոլեղին,
 Որտեղ գունտագունտ խոնվում ձեր տակին
 Հըսկայ զազաթներ, իսկ վեր՝ լոկ երկին...
 Վուք միշտ շարժվում էք, անհանդիստ քայլում,
 Բայց ուր և ինչո՞ւ,—պատասխան ինձ տուէք...
 Աամ, որպէս քամին, գուցէ չը գիտէք

Որտեղից գալիս և որտեղ էք գնում
 Աւ իբր սովորոյթ մարդկային կեանքի,
 Վուք էլ էք կազմել անմիտ մէկ արշաւ,
 Բնիած ետեւից չը տեսած բաղձի,
 Փնտռելով նպատակ, բերկրութիւն, համբաւ,
 Փնտռելով իմաստ մարդկային կեանքի:
 Ասցէք, հերիք է... Փուչ է բոլորը:
 Ո՛չ կեանքն իր գրաւիչ, սուղ մոլորութեամբ,
 Ո՛չ էլ բընութիւնն իր ճոխ գեղութեամբ
 Աւ ո՛չ երկրային հրաշալիները
 Ինձ էլ չեն զբաւում: Այլ կայ մէկ անկիւն
 Խոնաւ ու լըռին, թոյնալի սրտիս
 Յաւերժ ապաստան, ուր կայ անոյշ քուն,
 Ուր կայ մշտական հանգիստ տարազրիս.—
 Այնտեղ այդ խորում նեղ, խուլ, գաղտնապահ,
 Որ մահկանացուին տալիս դող ու ահ,
 Ուր ամեն կեանքի կաւարտէ ընթաց,
 Այնտեղ ինձ տարէք, քայլեր մոլորված...

27 նոյեմբեր, 1887.

* * *

Լուռ է գիշերն. խլաճայն անձրև է գալիս
 Աւ տաղալաբար միշտ խրփում է լուսամտիս:
 Այդ լուռ ժամին մոքով դէպ ձեզ եմ սլանում,
 Անոյշ վայրեր տարիներին եմ սիրում.
 Աամաց-կամաց դու աչքիս ես նըկարվում,
 Ո՛վ վաղանցուկ իմ գարուն:

Աարծես լսում եմ հառաչները զեփրուից
 Մեղմ երերվող աերևների, զբթալից,
 Իրենց ծոցում զազտուկ պահած ուներով
 Սիրած զետակն ականակիտ, կարկաջուն,
 Որ փրփրապէզ ալեքներով սահելով,

Պողտրիկ թաղվում է հեռուն:

Վանի՛ր անգամ դալար ափին նրա նստած,
 Պեղանրկար անուրջներով պաշարված,
 Վիտում էի նայեացքով ձիգ ու երկար
 Ելեքների զուարթ խաղերը և հողիս
 Լքըրում էր հիացումով, մեղմաբար
 Օրօրվում նինջը սրտիս:

Սիրում եմ քեզ, պատանեկան օրերիս
 Վաղցրը ընկեր, ով չար զետակ սիրելիս.
 Որքան ըստէպ սիրում էի պրտրտել
 Վո ափերով, մոռացմանըս այդ վայրեր,
 Եւ մրտազբաղ լսել աղմուկիդ անարդել
 Եւ ծառերի մրմունջներ:

Տեղ-տեղ ճիւղերն երեսիդ վրայ քարշ ընկած,
 Աարծես իրենց աերևներով՝ սառ ու թայ
 Մարմնիդ վըրան ուզում էին փայփայվել
 Ելեքներիդ շըշջելով սիրանուազ
 Խօսք ու տնչանք և լուռ ու մունջ արտասովել
 Որ զնում էին նրանք արագ:

Եյդ լեռներն իրար մօտիկ խոնրւած,
 Որ թաղվում են երկնի խորում ամպամած,
 Եյդ փափուկ ու թաւիշէ գորգը խոտի,
 Եյդ ժայռերը ցրցված նրսեմ, գոռաբար,
 Եմբողջովին այդ խոռոչը սքանչելի,
 Ոհ, ի՛նչ քաղցր են ինձ համար:

Յիշատակներ ծանր ու անոյշ յրչափ կան,
 Որ միայնակ այժմ սահում են աննրման
 Ու վայրենի այն աեղերի վըրայով:
 Եւ՛ աղ, հեաքերն նրանց զեռ իմ մէջ զգում եմ ես,
 Միշտ մէն՝ զաղանի զգացումներըս իմ գողով
 Որքան զրգվում եմ զեռ ես:

Եւ մտքերըս, յիշատակներս իմ բոլոր,
 Եւ անուրջներս, զգացումներս, մտամոլոր
 Ըզբօսնելիս՝ երազներիս ոսկէ ծալ,
 Եմեն քաղցրն, ինչ իմ սրտիս էր միշտ պէտք,
 Ի՞նչ շուտով կանհետանայ և չի մնալ
 Եհ, ո՛չ մի հեաք, ո՛չ մի հեաք....

8 Յուլիս, 1886.

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

I.

Պո՛ւ, որ կանգնած ես հայոց աշխարհի
 Սրտի վրան՝ ահեղ, մեծ ու պանծալի.
 Պո՛ւ, որ ալեզարդ ու պատկառելի
 Պլխով, ճակատով վեհ, աննմանելի՝
 Մէն ամբարձած ես՝ թաղված լիովին
 Երկնքի խորում զաղանի ու լըռին,
 Պո՛ւ, ո՞վ հայր Մասիս,
 Պո՛ւ քաղցր ես սրտիս:

Քո տակ ծաղկաղարդ, նախշունիկ ու զեղ
 Լայն սրփրոված են հովիտներ շքեղ,
 Ուր չար զեփիւռը տատանում մեղմիկ,
 Նուրբ փաղաքշանքով խոտրն ու ծաղիկ,
 Ուր կարկաջասահ, վըճիտ առուններ
 Օղբ բարձրացնում վայրի նրւագներ,
 Ուր ուռին լացում,
 Ուր թռչնակ երգում:

Ե յնաեղ բայելով դանդաղի գառնուկներ
 Ջուարթ արածում են, խմում յստակ ջրեր
 Եւ յողնած հովիւն նստում քարի վրան,
 Գրբի զեղ ափին, ծառի տակ անձայն,
 Եւ մրտամոլոր աչքերով դիտում,
 Կնչպէս գետակը թռչկոտում, խաղում,
 Վարերը սիրով
 Լուանում իր ջրով:

Եւ կամ մելամաղձ, մեղմ անուրջներով
 Մենակ հովիւր յափշտակված սրտով,
 Իր շքին նուագում, սահուն կկլացնում
 Ենոյշ մրմունջով, ձայներով սրտում,
 Եւ կամաց-կամաց նրա սև աչերից
 Հոսում են արցունք շատ, կարօտալից:
 Նրա սիրտը լալիս
 Քո վրագ, ո՞վ Մասիս:

Վո՛ւ, լեռ, մենակ ես: Վարաւոր սրգով
 Պատած ձակատրդ և կնձիռներով
 Խորշումած դէմքրդ,
 Հայ որդուդ ժրպիտ սպասում անգաղար:

Վո՛ւ զեղեցիկ ես, բայց քո զեղութեան
 Երկար դարերով պակասում մի բան,
 Որ հանում սրտից
 Հառաչի կսկիծ:

Նրան պակասում է աղմուկ կենդանի,
 Որ տալիս է կեանքն հանդարտին ու լի,
 Նրան պակասում է բաւականութիւն,
 Պէտքը հանդստի և երջանկութիւն,
 Որ քո գառնասուգ, լուռ շրջակայքին
 Պրտան ժիր տեսքը, տեսքն ըղձային,
 Որ թըշուառութեան
 Պջնջեն հեռքը լայն:

Նրան պակասում է այն կեանքն անկախ,
 Վեանքը փառաւոր, գործող ու անվախ,
 Որ զաւակներիդ կը հանէ խորից,
 Ուր նրանք ընկած են թըշուառ, ամնջալից,
 Որ կը պըսակէ գլուխդ խրոխտապանծ
 Իրն արժանի պսակով սիգապանծ,
 Իբրև սուրբ նըշան
 Քո երանութեան:

Ե յո՛, ո՞վ ո՞րք լեռ, հայի լի ձայնը,
 Հայի խօսքն աղատ, հայի անուկը,
 Ե յնքան շարչարված, մարտիրոսացած,
 Ե յնքան անարգված, այնքան հալածված,
 Թշնամիների նըղոված կամքով
 Ե յնքան ասարաբաղդ, միշտ պատած ահով,
 Հայի հանգի՛ստն է,
 Որ պակասում է:

II.

Թշուառութեան երկիր, երկիր թշուառների,
 Հայրենիք անզոր, հիւանդ ու մենի,
 Տանջանքի աշխարհ, աշխարհ լի ողբով,
 Ինչ շքեղ ես դու:

Եւ լեռներ ձրգված կապոյտ շղթայով,
 Խորունկ անտառներ, դաղանապահ ձորեր,
 Ուր դրախտի ձայնով երգում թռչուններ
 Եւ յստակ առու:

Ընդարձակ դաշտեր, տարածված չքնաղ
 Թաւիչէ խոտով, խոտով ծաղկաշաղ,
 Ուր հեռաստանում ծածուկ ու պղտոր՝
 Նայեացք ընկղմվում:

Սապտորակ երկինք, երկինք փառաւոր
 Իր նուրբ, մըտախոհ երկնակամարով,
 Տերևների մէջ շշուկ փափկաղով
 Հովիկի թաղնվում:

Եհա թափանցիկ հեռուի խորերում
 Պիւզն է ընկղմված մի ծառաստանում,
 Եղբատիկ տեսքը նրա խրճիթների
 Եյնտեղ նշմարվում:

Նրա շջակայքը՝ լուռ, տաղաբիալի,
 Օրը ընկուզների կանգնած մեկուսի,
 Հեռուից հազիւ ձայն ձիգ լավում մարդի,
 Խոտը մեղմ շարժվում:

Միտում եմ սրտանց այդ լռութիւնը
 Նրա հովիտներում և թրմրութիւնը
 Լեռների հրպարտ, լերկ գագաթների,
 Նրա պարտէզները

Երբեցնող բոյրով իրենց ծաղկների,
 Խուլ շաւիղները նրա արևակէջ
 Նրա ողջ բնութեան ջերմ սիրում եմ ես
 Հրաշալիները...

III.

Եւ ըստէպ նստած զուարճախօս խմբում
 Բարեկամներիս անհոգ, անտրտում,
 Սամ թէ ման գալիս բաղամամարդ մի տեղ,
 Տանը և դուրսը,

Եմենայն մի ժամ, ամենայն մի տեղ
 Պառն մտքերիս ես լուռ արվում եմ
 Եւ իմ հոգեկան աչքով տեսնում եմ
 Իմ հայրենիքը:

Տեսնում եմ մանուկն հայոց աշխարհի,
 Տասներեք տարվայ աղջիկ դեղանի,
 Օճակաւէտ դաշտում արձակ մաղերով
 Վազում է արագ,

Եւ ուրախ ձայնով, հնչիւն ծիծաղով,
 Եյտերը կարմրած, սև աչքը փայլուն,
 Նա չար հովիկի շնչին սիրասուն
 Պընում հակառակ:

Սարմիր, որպէս ինքն, վարդըն իր ձեռին,
 Թռթռուն, ինչպէս և թիթեռ նագելին,
 Խոտի վրայ նստած՝ ծաղիկների հետ
 Խաղում է մենակ:

Սակայն դիտեցէք նրա սև աչեր պես.
 Այնտեղ դեռ կանուխ հասած արտամութեան,
 Պառն արտասուքի ու աղքատութեան
 Երևում նշանակ:

Այդ աչերը ստէպ դիտում են արևուր,
 Ինչպէս հայրիկըն աշխատում է լուս.
 Եւ համարքով իր ցանած սերմերի
 Թափում է արցունք.....

Իհրձ հայր.... Ինչոր մարդ մէկ օր խրճիթի
 Բաղխեց դուռը և նրանից ստակ ուղեց—
 Պաղատանք, խնդիրք.... ոչինչ բնաւ չօգնեց....
 «Տուր քո ողջ արդիւնք»....

IV.

Նա յիշում է, որ այդ թըշուառ
 Օրն արցունքի մէջ անցաւ,
 Մինչ վերջապէս զեղեցկավառ
 Երեզակը մայր մըտաւ....
 Մութ զիշերը շուրջ տիրել էր.
 Ատաղղում էր դիժ քամին
 Եւ խրճիթի դուռն բաղխում էր
 Ենձրեք խիտա, ահազին:
 Ներսըն իրենց խեղձ, գեանափոր
 Խրճիթի մէջ գլխարքարշ
 Մայրն էր նստած, արտասուլաթոր
 Աչքով, անով աղէխարշ:
 Իսկ աղջիկն իր պստիկ եղբօր
 Հետ պառկած էր անկիւնում
 Եւ աչերը զիշերն բոլոր

Փակել բնաւ չէր կարենում:
 Մինչդեռ ճրագի լոյսըն աղոտ
 Խրճիթի մէջ տարածվում,
 Մերթ մարերու էր ասես մօտ,
 Մերթ վառվռում, չըթչըթում:
 Հայրը չըկար. ուր էր զնացել
 Աղջիկըն այդ չըգիտէր.
 Երգէն շատուց դուրս էր եկել
 Եւ դեռ խրճիթ մըտել չէր:
 Եւ վերմահում ինք փաթաթված,
 Սրտաբաբախ ու դողդոջ,
 Քամուն, անձրև ու մօրը լաց
 Ականջ էր դնում լուս, անկոչ...
 Յանկարծ դուռը պինդ բաղխեցին...
 Մաղերը խառն, յուսահատ,
 Խոժոռագէմ ու տխրագին
 Հայրը մըտաւ՝ ողջ գունատ:
 Սարսըռեց մայրն իր հարազատ
 Եւ համը կանգնեց նրա դիմաց.
 Նայեց կրնոջն նա իր անբաղդ
 Եւ խուլ ձայնով նրան ասաց.
 «Անիկ, թըշուառ ենք... թալանվեցանք.
 «Հարկեր տալու բան չը մնաց...
 «Տէր իմ Աստուած, ունե՛նք յանցանք,
 «Որ արւիր մեզ սուգ ու լաց»:
 Ասաց՝ գոչեց, խրճեց ճակտին
 Եւ դառնագառն արտասովեց,
 Բնկաւ լացող կրնոջ կրճքին,—
 Տնքոց ու լաց խառնրեց...
 Պողաց աղջիկն վերմահի տակ

Եւ խիստ լացեց... «Խեղճ իմ, լոց
 «Ռու թըշուառ ես»... այն ժամանակ
 Գոչեց հայրը դառնազգաց...
 Եւ յիշում է, այդ գիշերը
 Նա իր աչք խուփ չարաւ,
 Մինչդեռ հայրըն ու իր մայրը
 Ողբում էին սրտացաւ:
 Իսկ գուրսը միշտ մուծ գիշեր էր,
 Աստաղում էր գիծ քամին
 Եւ խրճիթի դուռն բաղխում էր
 Ենձրեք խիստ, ահագին...

V.

Եւերակների վրայ հայրենիքիս
 Թափառում եմ ես տխրազին սրտով
 Եւ խառն մտքերըն առաջ են դալիս,
 Գիզվում գլխիս մէջ մրուսյլ ծալերով:
 Ռ՛վ չքնաղ երկիր, անբա՞ղղ Հայաստան,
 Եյդ ի՛նչ չուսուական տեսարաններ են,
 Որ իմ յանդիման
 Շարքով ելնում են:

Իսկ մի ժամանակ այդ գեղ վայրերում
 Եղատ շունչն է սղատ արձակվել,
 Անդանի ոյժը խողացել սրտում,
 Մասիսըն հրսկայ պահապան եղել
 Հայոց աշխարհի՛ վտարած թըշնամի
 Եւ հայոց մարդու ժիր աշխատանքը
 Եղել նրա կեանքի
 Ենոյշ բերկրանքը:

Իայց ի՛նչ է այսօր այդ մեծ Հայաստան...
 Վարերի մի կոյտ, օձերի գաղա բոյն,
 Օրորոց հայի մեծ թըշուառութեան,
 Թոյնոտ յիշատակ նրա ցաւած հոգուն,
 Եմրապինդ շղթայ նրա տրկար մարմնի,
 Ճնշում, նեղութիւն և ամենայն տեղ
 Չեռում վայրենի
 Խաղալիկ արգեղ:

Օ, բազդի՛ բերում... Եւ մի՞թէ այդպէս
 Խորշոմած կը մնայ լայն հօրիզոնը
 Հայոց աշխարհի. մի՞թէ խնդերես
 Չի փայլել այնտեղ յուսոյ վառ աստղը.
 Մի՞թէ այդ երկիր նզովել հայրերը,
 Եւ կը դայ հային օրն ահեղ, աւա՞ղ,
 Երբ մայր-երկիրը
 Ալենի նրա դագաղ...

Եւ այդպէս դառն կամ մերթ գոչական
 Եւերակներում ձայնը լսվում էր...
 Երնագոյն ամպերն երկնածրոի վրան,
 Սրերի պէս ցրցված երկնում ճաճանչներ
 Եւստում էին ծագումն արևի...
 Եւ ձայնը կանչեց. «Ար մնա՛նք միշտ անգոյ»...
 Եւերակներում խըրոխտ, ահալի
 Երձագանդը ձիգ, խուլ որոտաց—ոչ:

ԵՐԵՒՈՅԹ

Նուէր օր. Ս. Ա. — Ին.

Իմ յանդիման բարձրանում էր
 Մի վիթխարի, նրսեմ լեռ.
 Նրա գագաթը ողջ թաղվում էր
 Եմպերի տակ անվեհեր:
 Նեղ շաւիղով խարխափելով
 Եւ քայլերով անհաստատ՝
 Ճգնում էի բոլոր ուժով
 Ենեղ վերը միգապատ:
 Սակայն ոյժըս պակասում էր,
 Շունչս կրտրվում անդադար,
 Սոկորդըս էլ չորանում էր,
 Սիրտըս տրոփում սաստիաբար:
 Տանջվում էի ու չարչարվում,
 Երցունք հոսում աչքերից...
 Օ, մոլթ գագաթ, ինչո՞ւ խորում
 Երկնի թաղված ես ինձնից...
 Եւ ես տնքում, յուսահատվում,
 Սանչում էի ցաւադար,
 Չեռներս էի խիստ կոտրատում,
 Տալիս անէծք ինձ վատթար:
 Արկի՛ն նոր ջանք, կրկի՛ն նոր ձիգ
 Բարձրանալու գէպի վեր...

Բայց զարնվեցայ գեանին սաստիկ,
 Ծանրացած որպէս բռ:
 Եւ ես պառկած էի ցաւով
 Հրակայ լեռան ստորոտում,
 Եւ սե մտքեր անվերջ շարքով
 Ճնշվում էին իմ գլխում...
 Սակայն ահա իմ ականջին
 Խուլ ձիգ աղմուկ զարնվեցաւ.
 Եյնտեղ կար լաց, ձիչ սրտազին,
 Աոծ, աղաղակ, ձայն ու ցաւ...
 Վա՛, եղբայրներս իմ հարազատ
 Լեռան միւս կողմն են ընկած,
 Խեղճ, վիրաւոր ու յուսահատ,
 Թըշուառութեան մէջ թաղված:
 Երակներըս իմ լարվեցան,
 Եմբողջ մարմնով ցնցվեցայ,
 Եչքերս կրակով փայլիլըեցան,
 Սուրճըս ուռեց—վեր թրայ...
 Ենպէտք ճրճի, զարնվի՛ր կրկին
 Թաւալգրտը հողին սե.
 Ո՛չ ոյժ, ո՛չ կամք քո խեղճ սրտին
 Բհութիւնը չէ ավել պարգե...
 Յանկարծ փայլակ սուր սրլացաւ
 Եմպերի մէջ խուռն ու մութ.
 Վողացին նրանք... և յայնվեցաւ
 Ինձ մի պայծառ երևոյթ:
 «Անց», հրամայեց քաղցրահնչիւն
 Ու կուսական նա ձայնով,
 Յառեց դէմքիս նայեաց վառվռուն,
 Յոյց ավեց գագաթը մատով.—

Եւ յաւազար սիրտըս լըցրեց
 Գիւցազնական դոռ կամքով,
 Տըկար հոգիս կենդանացրեց,
 Կրան տոգորեց ջերմ սիրով.
 Եւ տվեց մտքեր ինձ գեղ, վըսեմ,
 Յնորքներըս ցրվեց նըսեմ,
 Եւ վառ յոյսեր պարգևեց,
 Առըճքըս, յոգնած վշտից դժխեմ,
 Ազատ շնչով զուարթացրեց:
 Եւ ոյժըս ինձ վերագարցրեց,
 Եւ ինձ համար անուրջներ
 Աքանչաժըպիտ բերաւ նուէր,
 Սո՛ւթ ճակատըս լուսով սրփռեց,
 Գողացրեց իմ շըթներ,
 Եւ հրաշալի, հրպարտ արդար,
 Խօսքեր, մտքեր ու ձայներ
 Կրանցից հոսել սկսան գեղաբար...
 Այդ ժամանակ երևոյթը
 Սկսաւ բարձրանալ շաւիղով
 Եւ դէպ իրին, դէպ գագաթը
 Արկին արեց ինձ մատով:
 Ես ըսկսեցի սրտաբարախ
 Կրան հետևել լուռ, անկանդ...
 Եւ շուտ մէկտեղ հրպարտ, անվախ
 Մենք ամպերում թաղվեցանք...

* * *

Մեկամղձ աստղ, անարդ երկնային,
 Մանիշակազոյն փառաւոր դաշտում
 Մենակեաց փայլում ես դու տխրագին,
 Արպէս մէն փարոս անսահման ծովում:

Ինչո՞ւ է տրտում տեսքդ հրաշալի,
 Ինչո՞ւ հեռացած քեզ նրմաններից,
 Մըտախոհութեամբ պաշարված ես լի.
 Գաղանի ցա՛ւ ունես, ունես վի՛շտ, կսկի՛ծ:

Մենակութի՞ւնն է քեզ ձանձրացրնում,
 Արցո՞ւնք քեզ խեղդում ամպամած ժամին,
 Թէ՛ գիշերային մութը քեզ տանջում,
 Այո՞ս օր ես ուղում՝ կարօտ աշխարհին:

Ո՛չ, դու սիրում ես քո մենակութիւն,
 Բեղի անոյշ են քո սառ արցունքներ,
 Բեղե փայփայում գիշերվայ մթութիւն,
 Գէպ չնչին աշխարհ բնաւ չունես դու սէր:

Այլ դու տրտում ես, որ դեռ շատ տարի
 Պիտի թափառես երկնում աննպատակ,
 Առանց գրբաւման, առանց հաւատի,
 Մինչ իսպառ մարելն է քո մէն փափագ:

* * *

Լըռի՛ր, լըռի՛ր, անմիտ, յանդձուգրն երգիչ...

Վըսեմ ժամին ներշնչման

Պու՛մ մի՛ բացիր երազներիդ կախարչիչ

Տեսիլները. անթարգման

Նրանց հրապոյրը, նրանց հրմայքը միշտ դաղանի՛

Լոկ քո սրտիդ են անգին,

Լոկ դու ես նրանց զընահատում, կենդանի

Ոգի գտնում նրանց միջին:

Եւ մտքերդ, զգացումներդ անխախտ

Պահիր սրտումդ տրամական.

Եյնտեղ էր նրանց օրօրանը,— թող, աւա՛ղ.

Եյնտեղ լինի նրանց դամբան:

Վըսեմ, զգացված ու տանջալի բարբառով,

Վամ թէ սիրով ցաւունակ,

Վամ անողոք ու թոյնալի խայթոցով

Պու՛մ մի՛ դուրս եկ հրապարակ:

Ինչո՞ւ համար... Ետուածային բարբառը

Ինքնագոհ, խուռն ամբօխը

Խարէական երազ կասէ, խիստ խօսքրդ

Վարթնացրնէ նրա ոխը.

Չգացումներդ, անուրջներդ, տանջանքրդ

Նա կանուանէ՛ բորբոքված

Խելք ու մտքի զուացանքներ և սէրքդ

Եյնքան քեզնով դուրդուրված՝

Նա կը մտանէ անմիտ ու վառ ծիծաղին...

Եյն ամբօխը կատաղած

Մատաղ պսակրդ, պսակրդ փրշէ, տխրագին

Սը կոխկրտէ՛ վրիժառած,

Եւ վայրենի, կոշտ ու անզուսպ մի ծաղրով

Սը հալածէ քեզի նա,

Եւ, ինչպէս միշտ, դարձեալ օտար, մէն, վրդով

Սը թափառես հողի վրայ...

23 Օգոստոս, 1887.

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Երբ հոգեկան բուռն ցաւով ճնշուած
 Եւ անհանգիստ մտածումներով պաշարված,
 Իմ սենեակիս օդը թըլոււմ է խեղդիչ,
 Չորս պատերն էլ իրենց խլուժեամբ են նեղիչ,—
 Մոլորաքայլ ես ուզի եմ դուրս գալիս:
 Մօտ անտառից մեղմ հասնում են ականջիս
 Թռչնակների նուրբ ու հնչիւն երգերը,
 Լայնածաւալ կանաչագոգիստ ծառերը
 Ինձ զրաւում են դէպ իրենց զով հովանին,
 Ուր արծաթէ վըտակ հոսում լալագին,
 Ուր նուրբ, վայրի մամուռ քարերն է գրկում,
 Ուր բաղեղը ծառի սիւնին է կպչում:
 Եւ թըլոււմ է, կրծքիցս ընկաւ ծանրութիւն,
 Շուռնչս է ազատ, զգում եմ անոյշ բերկրութիւն,
 Երկնականար չէ թըլոււմ նեղ ու խրոտով,

Երևն էլ ինձ ժպտում ոսկէ ճաճանչով:
 Բայց մի պատկեր ամենայն ժամ, ամեն տեղ,
 Մեղապարտի, ասես, խղճի խայթ զօրեղ,
 Հալածում ինձ, խրլում բոլոր կախարհանք,
 Տալիս սրտիս արտունջ, վշտեր ու տանջանք:
 Ես տեսնում եմ, ինչպէս արգեղ, փուչ կերպով,
 Անպրտուղ, զուր մտքերով ու հոգսերով,
 Աեանքի բոլոր լաւագոյնը մոռացած,
 Եր կոչումը չը գնահատած, չը մբռնած,
 Մի ողջ սերունդ կորցնում իր վառ տարիներ
 Եւ դեռ չհասած, արդէն դարձել է նա ծեր:
 Որպէս հազիւ շառագունվող արշալոյս,
 Որ ծածկվում հէնց լուսադէմին ամպերով,
 Նա կորցրած երիտասարդ ոյժն ու լոյս,
 Շրջապատվում դատարկ կեանքի խիտ քողով:
 Չուրկ յանդուգրն քաջութիւնից, ուղղամիտ
 Չգացումներից, հպարտութիւնից ազնւամիտ,
 Եղբաւ վըսեմ անուրջներով, յոյսերով
 Եւ կանխապէս կարծրացած սիրտ ու հոգով:
 Նրա ներկան է պատիր, անհետ անցնում,
 Իսկ ապագան դեռ ոչինչ չէ խոստանում:
 Բոլոր զեղը, բոլոր վսեմը մարդկային,
 Բոլորն, ինչ գերազանց է ու անդին,
 Միրաբորբոք հրապոյրով նրան չէ զրաւում,
 Նրա ուղեղը, նրա սիրտը չէ տաքացնում:
 Թէ նրա սէրը, թէ ատելութիւնն են անհօր,
 Մինչդեռ լափում նրան նախանձը նենդաւոր,
 Փուչ կրքերից նա դեռ մատաղ թառամում,
 Եսես, պտուղը ցուրտ քամիից չորանում:
 Եւ նա կապրէ անպրտուղ ու անօգուտ,

Ժառանգներին չը թողնելով յիշատակ.
 Նրա նշխարներ չորս կողմ կը քշէ բուքն անգութ,
 Չաւակներն էլ նրան կանուանեն «խեղկատակ»:
 Բայց խըշտոցը տերէների դուրս կոչում
 Ինձ դառնագին մտածումներիս շրջանից
 Եւ վըճիտ ու կլկան վտակը արանջում
 Եւ արծաթէ արցունքներով ինձ պատմում
 Մէկ այլ պատկեր սոսկալից:
 Եյնտեղ հեռու, թըշուառութեան բոյներում,
 Տեքում է մէն ժողովուրդը հարազատ,
 Նրա կըժքումը վասն օձի պէս տաքանում,
 Թոյնով լըցնում նրա սիրտը խեղճ, սրգապատ:
 Աարծես դժնդակ օրհասական անէժքը
 Տաք արիւնով նրա ճակատին դրոշմվել,
 Եւ դարևոր անխիղճ, սպանիչ տանջանքը
 Եկել է նրան փորձել, մաշել ու կլանել:
 Եյն ամենն, ինչ կազմում էր նրա փառքը,
 Ինչ դարերով էր նրա հրգօր պարծանքը,
 Թըշնամ ձեռը կորզել ուժով մի վայրագ,
 Թըշնամ ձեռը դարձրել է աւերակ:
 Նրոս բաղդը, նրոս պատիւ խորտակել,
 Երանութեան նրա աղբիւրը ցամաքել
 Նրա պաշտածը մատնել զազիր, գարշ ծաղբին,
 Նրա ատածը հոչակել կուռք մարդկային:
 Եյն ամենն, ինչ անդին է նրա կեանքում,
 Լըպիրշ կամքով վասն անում է ոտնակոխ,
 Նրոս կեանքը մոլեգնաբար ջախջախում,
 Յագեցրնում իր ցաւիտ ու ազահ ոխ.
 Եւ իբր իրեն փառքի արձան պանծալել,
 Նրա ոսկրներ միմեանց վըրայ կուտակում

Եւ նենգ ծաղրով նայելով դէմքն ըսարկի,
 Վատր գոռոզ, գորեղ՝ այնտեղ միշտ տիրում:
 Մենակ, որպէս մի մոռացված որբ անտէր,
 Մենակ, որպէս և Մասիսը վեհ ու ծեր,
 Մենակ, որպէս օրօրօցում մի մանուկ,
 Մենակ մեռած անսպասում հայրենի—
 Եյն թըշուառն, ամեն բանից, աւանդ, զուրկ,
 Ըսպասում է աւետաբեր մի ձայնի—
 Եւ ինչպէս իր երկիրն աւեր դարձած խիստ,
 Միայն մի բան է աղերսում նա,—հանգի՛ստ:

Յուլիս, 1887.

Ա Մ Բ Ո Ս Ը

Բաֆֆիի յիշատակին.

Որպէս ովկէան վաղորդեան ժամին
 Իր միապաղաղ մակերևոյթով,
 Ժողովուրդային ամբոխը լըռին
 Վարում է իր կեանք սովոր ընթացքով:
 Եռօրեայ հոգսով ճակատը սքողված,
 Լայն կրճքում թագնված հրպարա զօրութիւն,
 Սրտում ամփոփված սիրոյ ջերմութիւն,—
 Եյլ կեանքի համար նա կեանք է նուիրած:
 Իբրև հզօր լաւա վուկանի ծոցում,
 Համբ համբերութեան մոխրի տակ ծածկված,
 Գաղանի կայծերը նրա մէջն են վառվում,
 Գառն օրվայ համար դրաւական դարձած:

Եւ ինչպէս մէջը խաղաղ ովկեանի
 Անյաղթ յորձանքներ շրջվում, կատաղում,
 Նրա մէջն էլ թաղուն կիրք ու իղձկրի
 Գոռ յորձանքներն են ուռչում, մեծանում:

Որպէս երկաթէ զըրահի ետև,
 Անհամբեր տրոփում սիրտը հերոսի,
 Նոյնպէս արտաքին լըռութեան ներքև
 Եռում է կեանքը և ոյժն ամբոխի.
 Լոկ երբեմն,—ինչպէս խուլը աղերսական
 Հողմը պրտավում ծովի երեսին,—
 Ամբոխի կրճքից անքոց սոսկական
 Ելնում և իբր հողմ դադարում կրկին:

Բայց ահա սուլեց հողմը գաղանաբար,
 Գունտ-գունտ կիավեցան ամպեր սևազոյն
 Եւ ալեքները հրեղով իրար,
 Բարձրաբերձ լեռներ կազմեցին խոյն:
 Եւ փրփրում, ոռնում, շրջում, շառաչում,
 Երկինք ու ովկեան ահեղ ցասումով
 Միմեանց հետ կուռում... ամեն բան կորզում,
 Միայն կանգուն կայ փարոսն իր լըսով:
 Եյրպէս և ամբոխն է տարր խորխտաղին.
 Երբեմն նրա կրճքից ժայթքում է լաւան,
 Նրա միջի յորձանք մոնչում են ուժգին
 Եւ նրա գոռ, դժգոհ շնչի զօրութեան
 Հանդէպ կործանվում ամրապինդ շէքեր,
 Նրբա կերակրած կեանքեր խորտակվում...
 Եւ լոկ փարոս իբր մէկ աւետաբեր
 Նրա գրոշակն այնտեղ մենակ ծածանվում:
 Մայիս, 1888.

Հ Ո Վ Ա Հ Ա Ր

(Մ.—ին)․

Երբ լեռան բարձրերից բընուլթիւնն եմ դիտում,
 Որ չքնաղ, գեղեցիկ իմ հանդէպ տարածվում,
 Ամա շքեղ անտառը տաք օրով եմ մանում,
 Ամա դաղտուկ, կուսական ձորերով եմ անցնում,
 Ամա դաշտն իր ծաղկների բոյրերով,—հովիկն չար
 Ե միշտ ինձ հովահար:

Երբ մենակ զբօսնում եմ ջրեղերքին սիրական,
 Ուր պաշտում ալիքին ուռիներ լալական
 Եւ սօթը ծանրանում, քայլելուց յոգնում եմ,
 Ուռնուտ տակ հովում մրտազբաղ նստում եմ,—
 Եւ այդ իսկ ժամանակ նրա տերեր դալար
 Ե միշտ ինձ հովահար:

Երբ մէն թափառելուց յիս քեզ մօտ եմ դալիս
 Եւ սիրոյ համբոյրներ քո դէմքիդ շաղ տալիս,
 Եւ քաղցր մրմունջով փայփայում եմ քեզի,
 Եւ կրճքիդ վրայ դընում գըլուխըս հըրալի,—
 Գեղեցիկ աչերիդ թերթերունքդ շքեղ, երկար
 Են ինձի հովահար:

Եյդպիսի ժամերին զեղանի անուրջներ
 Գըրաւում են հոգիս և անոյշ արցունքներ
 Մեզմ հոսում աչքիցըս, լի հեշտանք ինձ տըւած,

Սիրում եմ մարդկութիւնն ես սիրով մեղմազգաց,
 Եւ թողնում ինձ ողբըն ու տարակուսանքըս,
 Եւ հանգիստ է կուրծքըս:

2 Յունիս, 1886․

Մ Ա Ր Գ Ա Ր Ի

Երբ ես, բնակիչս անապատի,
 Քաղաքներով անցնելիս
 Նախատվում ու ծաղրվում էի՝
 Երգար խօսքը շրթներիս:

Երբ ծերերըն, արհամարհանք
 Տիրած իրենց սրտերում,
 Մանուկներին իմ տառապանք
 Վաստ օրինակ իբր ասում.—

Եյն ժամանակ հոգուս խորը
 Յաւակցութիւն էր ծագում
 Գէպ միամիտ այդ մարդերը,
 Երցունք աչքիցըս ցայտում:

Եյո, ես դառն լալիս էի,
 Որ սիրոյ, վսեմ ու արդար
 Օգացումները մեծ, պաշտելի
 Օտար էին նրանց համար:

Լալիս էի և այն սրտիս
 Երեան շիթերըն էին,
 Բորբոքվում էր բուռըն հոգիս,
 Ամբը եռում իմ միջին.

Ինձնից հեռու քրշում էի
Թուլութիւնքն ինձ տիրած...
Երգարագատ ու սուրբ մարտի
Օարաւ զգացի՝ զօրացած:

Բարձրը ու ջերմ իղձերն հոգւոյս
Իրագործել ուղեցի,
Տեսայ իմ մէջ և՛ ոյժ, և՛ յոյս,
Տոկուն մի կամք հերոսի:

Եւ այժմ, ուխտած անուններով
Ե՛յն բոլորի՝ ինչ սուրբ է,
Ես ճշմարիտ մի ճամբայով,
Մի լեզուով զոռ ու ոսկէ,

Պիտի դիմեմ նրպատակիս,
Խուռն ամբօխի մէջ մրտած,
Թէկուզ քարեր թափվին գլխիս,
Թէկուզ լինեմ անիծված:

Եմբօխի, այդ հրպարտ տարրի,
Որ խարխափում այլանդակ,
Սիրտը կանեմ յոյսերով լի,
Նրան կը տամ մեծ նրպատակ:

Ես նրա սրտում կը ներշնչեմ
Սէր, նրա կեանքի մէն փրկիչ,
Խստաբարբառ կրնրգովեմ
Նրա ախտերն աւերիչ:

Նրա չար լեզուն, նրա վատ լեզուն
Երմատիցը կը պոկեմ,
Բարութեան միտք, խօսք սիրասուն
Նրա փոխարէն կրնձայեմ:

Նրա կուռքերը կգահավիժեմ,
Աը զարթնէ քնից նա երկար,
Թըրշուառութեան գահը նրսեմ
Արնինէ անդունդը խաւար:

Ո՛չ հրպարտի ոյժն անխախտ
Ո՛չ որ ընկձել չէ կարող:
Եյդպէս վըսեմն ու սուրբն անյաղթ
Բնաւ չը գիտն չարից դող:

Հաստատակամ ու լիայոյս,
Խօսքով ազատ ու հրպարտ՝
Սերթան. Եհն և արշալոյս.
Շնու, դէպի մա՛րտ, դէպի մա՛րտ...

12 Յուլիս, 1886.

* * *

Ո՛չ, մի՛ աշխատիր ինձ մրխիթարել:
Փաղաքշանքները ինչո՞ւ զուր կորցնել:
Նրանք կենդանացնել հողիս չեն կարող,
Զի տալ ինձ նոր ոյժ սիրոյս քաղցրը դող:

Երբեմն, երբ դիտում եմ դէմքը սիրուն,
Զանում գուշակել քո միտքը թագուն—
Ճակատից վըրան պայծառ լոյս խաղում
Եւ գեղ աչերումդ ես սէր եմ կարգում:

Եռանց տխրութեան և ընդդիմութեան,
Գրբաւված՝ արվում եմ քո փայփայման.
Քո մէջ տեսնում եմ երազն իմ կեանքիս
Եւ գեղ կերպարանն իմ անուրջներիս:

Բայց շուտով նորից թախիճն ինձ օխրում,
 Որ հալածում էր ինձ իմ ողջ կեանքում,
 Եւ դէպ քո մրմունջն ու ձայն սիրունակ
 Ես համր ու պաղ եմ, որպէս մի դիակ:

* * *

Ինչո՞ւ սրախ իմ իղձը լուռ
 Սրնուցանել մի խաբուսիկ երազով
 Եւ կրքերի թոյնալի հուր
 Երբ բորբոքել անմիտ, գաղանի տանջանքով:
 Ինչո՞ւ կուլ տալ դառն արտասուք
 Ենկրագործ մէկ անուրջի պատճառով,
 Լքսել ինչոր ազահ շքշուկ,
 Հողուս թագուն ջերմութիւնը յուզելով:
 Անցնէ՛, — ոչինչ, — րոպէական
 Լոկ վրդովումն է դա սրախ անհանգիստ:
 Եյդպէս մրրկից յետ ծովն անձայն
 Նորից յուզվում է մի վայրկեան,
 Որ այնուհետ կրկին առնէ մեղմ հանգիստ:

Յունվար, 1885.

* * *

Ինչո՞ւ քեզ օխրել առանց պատճառի,
 Չարանիւթ մտքով հողիդ վրդովել
 Եւ տաղակութիւնը կարճ ժամանակի
 Մի դժգոհ կամքով դարձեալ երկարել:

Հաւատա՛, կրգայ օրըն այն շուտով,
 Երբ մէջ այլ մարդկանց և մէկ այլ վայրի,
 Եհեղ փոթորկում հալածանք կրելով
 Վու կըլթափառես սրտով դառնալի:
 Եւ տանջանքներում՝ յիշատակները
 Վո պարզ անցեալի կբացն իրենց շար,
 Այիշես այսօրվայ քո յոյսն ու սէրը,
 Որ վերաւորում ես անմրտաբար:
 Բայց զղջումըդ ո՛ւշ կըլինի արդէն.
 Ո՛չ քո արտասուք, ո՛չ քո ձիչ, գոչիւն,
 Ո՛չ քո կաթոզին աղաչանք ամեն,
 Եւսօղ, անցեալիդ չե՛ն տալ յարութիւն:

ԵՐԳԻՉԸ

Մոնչում էր ծովն ալիքներով փրփրադէզ,
 Փրչում հողմը կատաղի,
 Որոտն թնդում էր լեռներում ու ժգնապէս,
 Երկինքն էր մութ, ահալի
 Եւ ձեղքելով սև ամպերի գոռ երես,
 Փայլում կայծակն սոսկալի:
 Եյդ ժամանակ ժայռի տակին մեկուսի
 Երգիչն զարնում էր քնարին,
 Ոգևորված բնութեան խաղով կենդանի.
 Եւ այն ձայներըն էին
 Նոյնպէս մրույլ, նոյնպէս ուժգին, վայրենի,
 Որպէս բնութիւնն այդ ժամին:

Սակայն ահա երկինք շքեղ կապտանում,
 Երևն ցրրվում մուժ ամպեր,
 Ծիածանը գեղեցկագոյն նրկարվում
 Եւ զեփիւռը ժպտասէր
 Թեթեւ շնում, իջնում լեռից և զրգվում
 Մեղմ, ներդաշնակ ալեքներ:
 Եւ հրացած այդ հրաշալի պատկերով,
 Երգիչն զարնում ներշնչված
 Վնարին նորից, հնչիւն ձայններն հոսելով,
 Համբանում են երկնում բաց.
 Եւ նրանք տալիս են անուրջներ, սէր գորով
 Եւ նինջ հոգուն վրդովված:

5 Փետրվար, 1890.

Մ Ո Ւ Ջ Ա Ն ,

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՅՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԸ.

Բ ա ն ա ս տ ե ղ ծ Ը .

Ե՛կ, ի՛մ մուզա, Ե՛կ... արգէն յոգնեցայ:
 Բանաստեղծութեան մասին երազներ,
 Երազներ բարձրի, գեղեցկի վրայ,
 Ոսկէ անուրջներ, յուսոյ նըւէրներ
 Եւ իգէալը մաքուր, անվրդով,
 Վազըրը զգացումներ, սիրած, անոյշ գող
 Եւ մաքեր, որոնք հրեղէն թևերով
 Սլանում են արագ, թողնում արևուր հող:

Վէպի աշխարհըն այն եթերական,
 Ուր լայն է հայեացն, ուր շունչն է ազատ.
 Եւ թախիծ, վշտեր, տանջանքների այնքան.
 Որ ըստէս նոյն խոսի սիրելի են շատ,
 Եւ լուռ գիշերին անտես հրեշտակի
 Միրոյ միմունջներ մեղմ ու հրաշալի,
 Նրման ծրփերի նազելի ճղփիւնին,
 Նրման սոխակի սիրանուազ ձայնին,—
 Ե՛կ, ի՛մ մուզա, Ե՛կ... այդ բոլորն ինձնից
 Խուսափում են, իբր քրշված քամից:
 Ես զգում եմ, հոգիս պաղուժեամբ զրկված,
 Սրտիս լարերը վշտից թուլացած,
 Շրթներըս համբ են մընում անդադար,
 Որպէս գերեզման գաղանապահ, խաւար.
 Վաքեմ մաքերս էլ կարծես թէ արկար,
 Հիւանդոտ լենեն,— չեն կարողանում
 Զարթիւլ սառոյցի պինդ կաշկանդները,
 Որ տաք արիւնս են խիստ սառեցրնում
 Եւ ինձ յիշեցնում շերմի պաղ խորը:
 Մէկ անգութ զգացում ցերեկ ու գիշեր
 Զէ տալիս նիրհըն ինձ հանգստաբեր.—
 Ե՛հ, ես ապրում եմ, շուրջըս եմ նայում
 Եւ բոլորն այնպէս արգեղ է, տրտում,
 Որ կհանքը թւում է ծաղրը զան ու բաց՝
 Ուզգած մարդկային չարչարանքի դէմ,
 Նրշաւակութեան դրոշմով դժխեմ
 Նրա ճակատագիր ընդ միշտ անարգված,—
 Եւ գուռ մարդկութեան մարմնի վրայ մերկ
 Սլանում, ծխվում որդնոտած մեծ վէրք

Մ ու զ ա.

Ո՛վ դու արկար հողեղէն,
 Որ կըրում ես մարդ անուն,
 Ինչո՞ւ բնակչիս օգեղէն
 Վայրերից դեղ, սիրասուն,
 Խախտելով նինջը սիրոյս,
 Վո՞ր տրտունջով չարայոյզ
 Ներքե՛ աշխարհ ես կանչում,
 Հոգուս հանգիստն վրդովում
 Եւ մարդկային վերաւոր,
 Տրգեղ, անմիտ, սրգաւոր
 Սեանքի համար պալասան
 Սէզ պահանջում դու ինձնից:
 Մարդը պէտք է անսահման
 Բարձրը լինի իրենից,—
 Ե՛հա՛ կեանքի պալասան,
 Որ կը փրկէ տրգեղից:
 Տարակուսանքն դառնազին
 Յոյց տվեց մարդու թուլութիւն
 Եւ դրոշմեց նրա ճակատին՝
 Աեանքում—վշտեր, կսկիծ, թոյն
 Եւ խնդութիւն մէկանդոյն,
 Իսկ շիրիմում մրթագին—
 Ոչնչութիւն: Բայց հրպարտ
 Միտքն ու ողին մարդկութեան
 Եպստամբեցին անհանդարտ
 Ընդդէմ կեանքի այդ նորովման:
 Ո՛չ,—նրանք ցասկոտ գոչեցին.—
 Թէև կեանքն այսօրվայ

Թըշուառ է ու դառնազին,
 Բայց կան սերմեր ապագայ
 Երանութեան նրա միջին.
 Եւ մարտիրոս մարդկութիւն,
 Նրա պալասանն զխտութիւն,
 Վէպ ապագայ կեանք փայլուն
 Վիմուն է միշտ... Վո՞ր գէմքից
 Վայ այ տեսնում եմ մի ժրպիտ,
 Որ խորին ցաւ ցոյց տալիս,
 Սարծես սիրարդ է լալիս:
 Հասկանում եմ քո լացը
 Եւ քո յոգնած անքոյցը,
 Հասկանում եմ մորմոքող
 Յուսահատութիւնը քո ես,
 Տրերութիւնը քո մաշող
 Եւ վշտերը քո անտես,
 Երցունքները դառնազին,
 Ժահրը, մաղձը քո հողոյ
 Եւ տրտունջը քո սրբոյ,
 Անէծքները վշտազին,
 Անհաշտութիւնդ մարդկանց հետ,
 Չարութիւնը դառնաւէտ...
 Հասկանում եմ բոլորը—
 Ի՞նչ ես ուզում այսուհետ:
 Երկրայինն ու աշխարհը
 Երգէն ծանօթ է քեզի:
 Վո՞ւ տեսիլ ես մարդկային
 Վատութիւնը զազոկի,
 Բընազդումները չնչին,
 Անհոգութիւնն, ծիծաղը

Նախատելի և խաղը
 Նրա կրքերի ստոր ու ցած,
 Գոռողութիւնը տխմար,
 Թշուառութիւնը խռովարար,
 Տանջանքները, ցաւն ու լաց:
 Եւ այդ բոլոր ազմուկը,
 Խառնափնդոր շրշուկը
 Եւ ճիչերը վայրենի
 Քո ականջիդ են հասել
 Իբրև անքոց խոր ցաւի,
 Որ արմատից պիտ բուժել
 Եւ տալ մի նոր հոսանք նրան—
 Խաղաղընթաց, պարզ ու լայն:
 Ի այց ո՞վ անհաշտ ու հրպարտ
 Օւաւակ հիւանդ մարդկութեան,
 Երբ կըստանայ լացդ աւարտ,
 Հերիք լինես տրամական:

Ի անաստեղծը.

Եկել եմ աշխարհ և պիտ աշխարհեմ.—
 Ճակատագիրըն այս է իմ դժխեմ:

Մ ու զ ա.

Եւանդ, դառն այդ բողոք,
 Որ կրճքիցըդ է ելնում,
 Գիտեմ, տալիս քեզ մորմոք,
 Գիտեմ, սիրտըդ է տանջում,
 Թունաւորում դառնաւէտ
 Գոյութիւնըդ քո տրտում.—
 Ել ի՞նչ ես դու որոնում
 Աշխարհիս մէջ այդուհետ:

Ի անաստեղծը.

Չընաշխարհիկը:

Մ ու զ ա.

Գ ու զ ը ը ը ը ը նրանից:

Ի անաստեղծը.

Եյո, կար իմ մէջ, բայց... մի ժամանակ,
 Երբ մի զգացումով զրժուարագուշակ,
 Ենթացատրելի՝ սիրաբա սիրալից
 Բորբոքում էր նա և հրմայեցնում
 Ինչ-որ հրաշալի, սուրբ, վըսեմ կայծով,
 Որ անուրջներըս էր միշտ պահպանում
 Գեղեցիկի, բարձրի մասին անվըզով,
 Որ զըրաւում էր յոյս ու երազով
 Իմ ազահ միտքըս և տալիս հաւատ
 Երկրայինի ապագայի վրայ,
 Եւ ուրախութեան քաղցրը, յորդառատ
 Երցունք էր սիրով նըւիրում ինձ նա,
 Եւ երկրնային գեղ ծիածանից
 Հիւսած օդային ու կախարդական
 Ինչ-որ թակարդով պաշարում մէկից
 Ողջ էութիւնըս իմ տրտրմական...
 Չընաշխարհիկը... Ե՛հ, մի ժամանակ,
 Եյո, կար իմ մէջ, և պարզ սիրունակ
 Սրտով ու հոգով զգում էի բերկրանք,
 Մինչդեռ այժմ կայ շունչ, բայց, աւանդ, ո՞չ կեանք:
 Իմ մէջ այն վըսեմ չընաշխարհիկը
 Ոչընչացըրին կեանքն ու մարդիկը:

Մ ու զ ա.

Սեանքում չըկայ մէկ ոյժ այնպէս,
 Որ կարենար նրան կորզել

Եւ քո հոգուդ մէջ զաղանապէս
 Շարունակում նա բնակվիլ:
 Նայիր դու քո ներսը ծածուկ,
 Գիտիր դու նրա ծալերը,—
 Նրանցից մէկում նա՝ մէն, փախուկ՝
 Թեթեացնում խօսքով փափուկ
 Քո տխրագին ժամերը:
 Նա այնտեղ է անյաղթ ու սուրբ,
 Որ մարդերից է խոյս տվել,
 Նա այնտեղ է մաքուր ու նուրբ,
 Որ սիրտդ վատից պահպանել:
 Լուսաւորված փայլով աստղի
 Ճշմարտի և արդարի,
 Երկնային վեհ ովկէանի
 Վարայ նա միշտ սաւառնում լի,
 Արուելով դէմ խաւարի:
 Հանգիստ, ժրպիտ, քաղցր սիրտանք
 Թէեւ քեզնից են փախած,
 Բայց աննրկատ, զգալով հեշտանք,
 Քեզ զրաւում է նրա կախարդանք
 Եւ դու հոգով հրմայված,
 Ողջ տրվում ես նրա մեծ կամքին:
 Անձնանրէր, անտրտունջ
 Եւ տակը նրա հովանիին
 Լսում ես զմայլիչ մի մրմունջ,
 Եռնում հիւթը կենդանութեան,
 Ենայտ սիրով օրօրվում
 Եւ արվելով մոռացութեան,
 Ենթում ես երանութեան,
 Հանգստի վրայ անտրտում—

Եւ երգում ես... Հնչէն ձայներ,
 Հողեղմայլմամբ կախարդիչ
 Ներշնչված, որ այդ դիւթիչ
 Ժամին հանում են քո շրթներ
 Եւ մեղմ թռիչով քեզի տանում
 Եշխարհ անյայտ, անձանօթ,
 Ուր հոգուդ հեռ ես դու խօսում,
 Ուր սրտիդ ձայնն ես դու լսում
 Եւ ի՛նձ տեսնում լոկ քեզ մօտ:
 Երգիր, անգի՛ն իմ բարեկամ,
 Երգիր ծովի մրունչիւն,
 Երկնի կայսրայրն անթառամ,
 Եմպերի խուռն բազմութիւն,
 Բնութեան խաղերը կենդանի
 Եւ խուլ շշուէջնն անտառի
 Եւ առուակի կարկաջը,
 Երբեցուցիչ բոյրը ծաղիկ
 Եւ սոխակի հառաչք.
 Մութ ձորերի գաղանթութիւն,
 Գոռ լեռների ձիգ շղթան,
 Բնութեան ողջ շքեղութիւն
 Երգիր խանդով անսահման:
 Երգիր սիրոյ խոր հառաչանք,
 Ենհետացած քո կախարդանք,
 Տրկար հոգուդ խոր տնքոց,
 Սիրող սրտիդ ցաւ, տառապանք
 Եւ արցունքրդ, ձիչդ ու կոծ:
 Երգիր ձայնով աղեկրաուր
 Մարդկութեան խիստ չարչարանք,
 Նրբա կեանքը ցաւոտ, արխուր,

Կրա խեղճութիւն, նրա տանջանք,
 Կրա թրշուառ ու սև օրերը.
 Բայց և երգիր դու յոյսերը
 Ապագայում կենդանի
 Օտգման նրան մի նոր կեանքի:
 Բոցավառիր վրսեմ երգով
 Մարած սրտերը մարդկանց,
 Նըշաւակիր արդար խօսքով
 Չարը, վատըն անթափանց.
 Ղշմարտութեան ձայնով հրգօր
 Պարշ ոյժերը նըզովեր,
 Երգարութեան սուրբ, փառաւոր
 Յաղթանակըն աւետիր....
 Երգիր և թող երգերդ լինեն
 Վաղցրը, ցաւոտ, սրգաւոր.
 Երգիր և թող ձայներ կլնեն
 Բուռն, վայրենի, թունաւոր:
 Թող նրանց մարդիկ բնաւ չը սիրեն
 Եւ կատաղած քեզ հալածեն,
 Թող քեզ ծաղրեն նենգաւոր
 Ժպիտով, խօսքով վիրաւոր,
 Թող քո դունատ, հըպարտ ճակատից
 Պոկին փրչէ քո պըսակ
 Եւ ծափ տալով ու անկսկիծ՝
 Կրան կոխկրտեն համարձակ:
 Թող գըրանով նրանք չեն մարիլ
 Կըւիրական հուրն քո մէջ.
 Թող գըրանով չեն մեռցընիլ
 Սէրըդ վրսեմ ու անշէջ.
 Թող պըսակի համար չէիր

Երգում մըռայը տրամուսէր:
 Չընաշխարհիկն էր սիրալիւր
 Որ քո մէջը երգում էր:

Բանաստեղծը.

Երգեմ... Ո՞ւմ համար, ինչո՞ւ մի պարապ
 Վնարով ձանձրացնել յախուռն ամբոխին:
 Կա չի հասկանալ բողոքս սիրատապ,
 Մաղձոտ խօսքերիս միտքը տխրագին
 Կրան օտար կը թւի. թոյնալի, մըռայլ
 Հողուս հեկեկանք չի կարողանալ
 Բզգացնել նրա պաղ ու անհոգ սիրտը,
 Կա չի գնահատիլ ո՞չ իմ յոյսերը,
 Ո՞չ իմ յուսահատ ճիչ ու ողբերը,
 Իմ տարակուսանք, իմ արցունք աղի
 Սերտած խօսքերի նա շարք կանուանի
 Եւ չի բշտապիլ գալ իմ հըւաւէրիս
 Վէպի մարտագաշտ վրսեմ ու արդար.
 Կրա պաշտած կուռքն է օտար իմ սրտիս,
 Իմ արդար կարծածն՝ նրան է շատ օտար:
 Ո՞չ մուգաս, երգել և բնաւ չիմանալ
 Ինչո՞ւ, ո՞ւմ համար: Երգել միշտ սրտանց,
 Յետոյ զեփիւռի շնչին երգըս տալ
 Որ փախցնէ հեռու՝ բարձունքն անթափանց.
 Երգել անպըտուղ սերմեր ցանկրով
 Հողեմաշ ձայնով, կուրծքըս պատռելով.
 Երգել որպէս մի մարդարէ մերժված
 Խուլ անապատում, որպէս սիրազգաց
 Սոխակը վարդի կոկոնի գլխին.
 Երգել լարերով տըխուր, ցաւագին,
 Երգել դառնաշունչ, մեռակ, անխաղաղ....

Ե՛հ, ո՛չ, հերիք է, իմ մուգա չքնաղ—
 Արդէն յողնեցայ... Արդերս այժմ ինձ
 Թըռում են զուր ձիչ, զուր ողբ, զուր կսկիծ,
 Արդիւնք անհանգիստ եր՛ւակայութեան,
 Խիստ վրդովումներ վառվրուուն արեան:
 Հերիք որքան ես նրանցով ապրեցայ,
 Որքան խաբուսիկ հմայքին արբեցայ.
 Բողորը մտքիս ցընորք էր միայն,
 Մողորութեանըս աղբիւրն էր ունայն...
 Հերիք... յողնեցայ... Վրնար իմ պարապ,
 Վրնար աղէխարչ, բայց և անպրտուղ,
 Թող քո լարերը պատառվին ըշտապ,
 Թող վերջին ձիչըդ հեծէ, որպէս ծուխ՝
 Խեղիչ օդի մէջ շուտ անհետանայ.
 Չարնըլի՛ր քարին, փրշովի՛ր, անպէ՛տք,
 Որ քեզինց յետոյ աշխարհում չը մնայ
 Բընաւ ո՛չ մի հետք... աւաղ, ո՛չ մի հետք...
 (Ներսէ մանուկ հրապարակախօսը: Մուգան անհետանում է)

Հ ր ա պ ա ր ա կ ա խ օ ս ր .

Վարձեալ մենակ էք... Արդեօք իմ թերթիս
 Համար բան ունե՞ք:

Բ ան ա ս տ ե ղ ծ ր .

Ե հ ա գ ր ը ռ ա ճ ք ի ս

Տեարակը. վերցրէք, եթէ հաւանե՞ք...

Հ ր ա պ ա ր ա կ ա խ օ ս ր .

(Փոքր-ինչ կարգալուց յետոյ)

Վարձեալ երազներ, դարձեալ թրուիչներ
 Ար՛ւակայութեան և ըզգացումներ
 Տրտում ու ցաւօտ. դարձեալ արշաւներ

Ինչոր միգապատ իդէալն յետ.
 Բանաստեղծական անուրջների հետ
 Թռչում էք վերև, երկնի խորերը,
 Թողլով հողն վրայ մեր խեղճ սրտերը:
 Սըրանք բոլորն էլ շատ զեղեցիկ են,
 Մտկայն դրանք չեն մեզ հիմա հարկաւոր,
 Վրանք չեն, որ այժմ ըզբաղեցնում են
 Հասարակութեան միտքն ամեն օր:
 Ինչե՞ն են մեզ պէտք պօէտի մօրը
 Մտքի այդ խաղեր, երբ ամենօրեայ
 Ունենք կրօնը հոգսեր բաւական,
 Ունենք բուժելու ցաւեր անխրնայ:
 Վուք ունեք, այո՛, ընդունակութիւն,—
 Ինչու չէք վերցնում կեանքից պատկերներ,
 Իրական, շնչող, պարզ տեսարաններ,
 Որոնք կունենան նըշանակութիւն
 Հասարակութեան համար մեծ, կրթիչ
 Որոնք կըլինեն նոյնպէս և դասեր
 Թէ՛ բարոյական և թէ՛ կենսական,
 Նրբա ուղղեցոյց և նրա ուսուցիչ:
 Այդ ժամանակըն ահա իսկապէս
 Վուք տված կըլինեք մեծ օգուտ մեզի,
 Եւ ես պատրաստ եմ ձեզ անմիջապէս
 Հիւրասիրել իմ թերթում: Այնպիսի
 Պրուածներ չչեղում են իրականութեամբ.
 Հասարակութիւնն նրանց մէջ տխրութեամբ
 Տեսնում իր կեանքի տրգեղ, վատ կողմեր
 Եւ նրանց աշխատում ուղղել անհամբեր:
 Իսկ այժմ ի՞նչ է աշխատանք ձեր սուղ—
 Աորձուտ ժամերի, քրտի՛նք անպրտուղ...

Ո՛չ մեզ պէտք չեն ձեր չափած տողերն էլ,
Երբ նրանցից օգուտ չենք կարող տեսնել:

Բանաստեղծը.

Եւ՛ աղ, ձեր խօսքերն նրման կապարի
Օանրանում կրծքիս... Ե՛հ, ո՛չ այն չէ ինձ
Պատճառում մի ցաւ, որ հաւանելի
Ձեն ձեզ իմ սրտիս արիւն ու հիւթեր,—
Ժայռը չէ խախտվում ջրի հարուածից,
Եւ դիտեմ, օրհասն ինձ դառն է ժպտում,—
Բայց անարդար են ձեր այդ բողբոջներ:
Վուք ժամերի զուր կորուստ էք հաշւում
Ձիգ գիշերների իմ տրամութեանըս
Եղի արցունքի այդ արդիւնքները.
Սէր, տանջանք ու վիշտ, յուսահատութեանըս
Վեռ ծխվող վէրքեր, իմ հառաչները—
Եյդ զգացումները բոլոր մարդկային
Բանաստեղծական խաղ են ձեզ թըւում,
Թըւում մի սրտի տրտունջներ չնչին:
Բայց դանում եմ մեծ միտք զգացումներում
Եռանձին մարդու՝ մինչ անգամ համայն
Մարդկութեան համար: Հանուր բաղմութեան
Սեանք ու ձգտումներ, ձայներ կենդանի,
Ժրպիտ ու ցաւեր, յոյսեր դեղանի
Եւ դառնութիւնը յուսահատութեան,—
Եմեն բան, ինչ նրա սիրտն ալեկոծում,
Եմփոփված մէկի ըզգայուն սրտում,
Յողանում նրա անկաշառ հոգում
Եւ հնչում նրա ձայն: Երդում ներչնչված
Վտնվում աղբիւրն անարատ մնացած
Բոլոր գեղ ու բարձր ըզգացումների.

Նրա մէջ կայ հրմայք մեր մտքի համար
Ենբացատրելի, անհասկանալի,
Մինչդեռ մեր սիրտը շուտ, ազահարար.
Պըրաւվում նրանով, տրվում սիրալի
Նրա հոսանքին լայն ու հրաշալի,
Քարթնում, կախարդվում մեր թըմրած ողբի
Եւ խաղաղութեամբ լեցվում մեր հոգին:
Նա— ձայնն է սրտի, գաղտնիքը հոգու,
Մարդկային մտքի թըռիչն ահարկու,
Յաւէտ հարածող գարշն ու նրսեմը,
Սըլացող դէպի աշխարհն դեղեցիկի,
Սըրող իր մէջ այն բոլբոջ վըսեմը,
Ինչ որ մարդկային բընութիւնն ունի:

Հրապարակախօսը.

Սակայն դըրանց մէջ ես շոշափելի
Օգուտ չեմ տեսնում մարդերի համար:
Նրանց ի՛նչ, եթէ դուք խիստ տանջանքների,
Վշտերի զոհ էք եղել անդադար.
Նրանց ի՛նչ, եթէ դուք սլանում էք վերև,
Եր՛ւակայութեան աշխարհն երկնային
Եւ անուրջների տեսնում դեղ արև,
Վանի որ նըրանք ցածրը, երկրային
Տատանումներում առօրեայ կեանքի
Վարում են օրերն իրենց ցաւագար:
Իրենց հոգսերով զբաւված մշտաբար,
Նրանք մինչ իսկ միջոց չունեն ձեր թուխի
Ետեից դիտել, դուք անմաշելի
Եւ շատ հեռու էք անգամ նրանց համար...
Ո՛չ կացէք նրանց մօտ. տըւէք նրանց տեսնել
Իրենց պատկերը, թողէք հասկանան

Նրանք ձեր մտքերը բանաստեղծական
 Աշխարհից ցածրը պէտք է ձեզ իջնուր...
 Ի՞նչ է պէտք ևս բընութեան խաղեր
 Եւ տեսարաններ, որ դուք սիրում էք
 Նրկարագրելու դարձեալ պրտոգրեր,
 Օգտաւէտ լինել կարող չեն երբէք
 Հասարակութեան համար այդ բաներ:
 Ի՞նչ է ձեր նպատակ, ի՞նչ էք մշտաձուժ,
 Որ խորհուրդներըս լըսել չէք ուզում:

Բանաստեղծը.

Բանաստեղծը լոկ լսում է իր սրտին
 Եւ հետեւում է միայն նրա կամքին:
 Մարդերի պաշտած կուռքի յանդիման
 Նա չէ խոնարհում ճակտով վսեմական
 Եւ իրեն համար նա չէ ըստեղծում
 Առուքեր բընաւին. նա միայն սիրում
 Շունչն ազատութեան. ազատ նա ծընվեց,
 Ազատ կը շնչէ. նա անսահմանը
 Իր լայն սրտի մէջ սահման դարձրեց,
 Երկնային հրպարտ, վեհ բարձրութեանը
 Իր հըսկայ թռիչով նա ազատ հասաւ,
 Իր հովանու տակ տիեզերքն առաւ,
 Իր զգացումներում տեսաւ մարդկութիւն
 Եւ իր աշխարհում—ամբողջ բընութիւն:
 (Հրապարակախօսը դուրս է գնում)

Բանաստեղծը.

Մ՞ո՞ւզա, ո՞ւր ևս դու. . . Ա՛հ, սոսկալի է
 Այսօր ինձ թըւում մնալ մենակ, տրտում.
 Ե՛կ, թըւի՛ր ինձ մօտ. կուրծքըս ճնշվում է...
 Ծա՛նր է ինձ... Մ՞ո՞ւզա, ևս քեզ կո ուզում...

Մ՞ ու զ ա.

Ողջոյն, մրտերիմ, սիրոյ քեզ ողջոյն,
 Ահայ յուսահատ կոչմանդ զողորջուն,
 Բերի ես քեզի փաղաքշանքներըս...
 Եւ մեզմ ու քաղցրը իմ մրմունջներըս...

Բանաստեղծը.

Սպասի՛ր... Նայիր դու այն հեռուի խաւար...
 Տեսնում ես այնտեղ թափառող մի կրակ.
 Տե՛ս, նա մերթ մարում, մերթ նրա լոյսն է վառ.
 Տե՛ս, նա գընում է... մանում ծառի տակ,
 Գուրս զալիս կրկին... Խաւարում թաղվեց...
 Նորի՛ց երևաց... Այլ չըկայ... մարեց...

Մ՞ ու զ ա.

Վե՛զ ի՞նչ պատահեց... դու գունատեցար...
 Ի՞նչ է այն կըրակ.

Բանաստեղծը.

Նա—կեանքս է թըշուառ...

Մ՞ ու զ ա.

Ի՞նչ հուր է այրում հողիդ վշտահար.
 Ի՞նչ ևս դու ուզում:

Բանաստեղծը.

Հանգի՛ստ... լոկ հանգիստ...

Մ՞ ու զ ա.

Գ՛իր գըւերդ կըճքիս... այրվում է նա խիտ,
 Աըրակի մէջ են և քո այտերդ,
 Մինչ ձեռներդ սառ, զողում մարմինդ
 Եւ աչքերդ անմիտ ու աննրպատակ
 Թափառում աստ-անդ... Ե՛կ. քեզ սիրունակ
 Ես նըւագ երգեմ և թող հանդարավին

Բուռն զգացումներդ, երգից ներդաշնակ
Հողիդ ու սիրտըդ թող կամաց ննջին:

Մ ու զ ա յ ի ե Ր Գ Ը:

Եթերական անեղը դաշտում,
Ենթարեկամ, միայնակ,
Այց մէկ աստըդ, որ միշտ փայլում
Մեղամաղձ ու տիւրուենակ:
Մերթ նրան հիւր են թափառական
Ու տարագիր ամպերը,
Մերթ նրա անուրջն է սքանչական
Ծիածանի դոյները:
Բուռն որտան է մերթ նրա իղձեր
Հողագընտիս թարգմանում,
Նրա ցաւն է մութ ինչպէս զիշեր,
Մինչ լոյս օր է նա տենչում:
Եռանձնացած լայն երկնքի
Մի մըտախոհ անկիւնում,
Գիշերները նրա արցունքի
Բիւր շեթերն են, ծաղիկների
Վարաց շարվելով, կաթկաթում,
Նման երկնային փայլ ցօղերի,
Գեղապսպղիկ դողրդում:
Լուսադէմին ազահ տենչով
Եզամանդ է այն ցօղերով
Ծաղիկներն են յագենում
Եւ կենսատու հիւթի ուժով
Գլխիկները բարձրացնում:
Լոյս օրն երկնին հայեացք ուղղում,
Եստղին տեսնել ուղերով—
Եյնտեղ այլ ևս նա չէ փայլում,

Եւ մընում են կարօտով:
Հաղիւ զիշերն իր քող սփռում
Նրանց գլխիկներ կախվում են
Եւ նրանք տեսնել աստղին արտում,
Եւձող, կրկին անգօր են:—
Եյդպէս քո հուրն նըւիրական,
Որ անտես է մարդերին,
Եյրում, յուզում հողին մարդկան—
Բսպեղանի նրա վէրքին.
Եւ մարդիկը երանութեան
Մէկ օր կհասնեն վեհ քայլով
Մինչդեռ ինքը շերիմական
Գրկված կլինես խաւարով:

Ապրել, 1887.

ՍՐ. Մ. Տ. Մ.—Ի

յիշատակին.

Մինչդեռ ծառերում դալար, պճնազարդ
Թռչնակներ երգում քաղցրը նըւագներ
Եւ բընութիւնը զարդարուն, անդարդ
Իր գեղեցկութեամբ փայլում անտարբեր.
Մինչդեռ մարդերըն ուրախ դէմքերով
Երջանիկ զբօսնում՝ գոհ իրենց բաղդից
Եւ ամենայն տեղ ամենքն անվրդով
Վենդանութեամբ են շնչում բերկրալից.—
Ես, ո՞վ սե շերիմ, քո դուռն եմ բաղխում
Եւ վաղուց քո մէջ ամփոփված մէկին,
Որ զիտէր սփոփել հողին իմ արտում,
Ուղղում եմ տեսնել մէկ անգամ կրկին:

Եյն սիրող հոգին տեսնել եմ ուզում,
 Որ կրթել է միշտ սրտի ցաւ ու դող
 Որ իրեն մարդկանց մէջ մենակ էր զգում...
 Եւ՛նք, սա նա՛ է... մհ, հոգ... Միայն հող...

ԵՂԲԱՅԻ ԻՄ, ԵՂԲԱՅԻ ԻՄ...

Եղբայր իմ, եղբայր իմ, ո՛վ որ էլ լինես,
 Թըրուառ գիւղացի թէ ըստրուկ մի բանող,
 Ուզում եմ քո ձեռքդ, որ պինդ սեղմեմ ես,
 Սրտիդ բաբախմանն ականջ դնեմ անդող:
 Քո մէջ ամփոփված է անյայտ մէկ աշխարհ,
 Ետողջ ոյժերով լի և դեռ ձեռ չըտված,
 Քո մէջ թագնւած մի զգացում անխոնարհ
 Զարի՛, խաւարի՛ դէմ կրոււի է կոչված:
 Բեռիդ տակ՝ կրծքիդ մէջ յոյսեր կան անտես,
 Թագուն դեռ մտքեր կան քո կնճիւններում,
 Որ ավել ըստրուկ կեանքդ ճակտիդ կանխապէս,
 Որ քո գերութիւնդ քեզի սահմանում:
 Քո սիրտըդ էլ լայն է, որպէ՛ս այն բնութիւն,
 Որտեղ քո սև օրն ես անցնում օրնիրուն,
 Եւ քեզ զգացումներդ նոր կեանք խոստանում,
 Քայլերդ էլ այնտեղ են անկանգ քեզ տանում:
 Դու—մի՛շտ կանգուն սիւնն ես կեանքի մարդկային,
 Դու—ապագան ես գեղ, երանելի,
 Դու—գործադրողն ես բնութեան օրէնքին,
 Դու—Պոսմէթէոսն ես այժմեան աշխարհի:

Եղբայր իմ, եղբայր իմ, ինչո՞ւ ես դու լուռ...
 Հարուածն օրհասի քո շատ խիստ քեզ դալիս,
 Քեզի կաշկանդում են շղթաները կուռ,
 Ճնշում են, խեղդում են քեզի, սիրելի՛ս:
 Գիտե՛մ, այժմ չարը, իբրև որդ անկուշտ,
 Կրծում է ամեն-մի մարդու կուրծք ու սիրտ.
 Գիտե՛մ, ուժեղներն այժմեան արիւնուշտ
 Սնվում արիւնովդդ, վամպիր իբրև բիրտ.
 Գիտե՛մ, քեզ բաժին է հասած մի թըրուառ,
 Ենթիւ տանջանքում քո օրերդ անցնում:
 Գիտե՛մ, այժմ արդարը ծաղըվում վատաբար,
 Լոյսն ու ճշմարիտն ագահ հալածվում:
 Եմեն տեղ տիրում է խաւարն անթափանց,
 Գեղեց էլ արգելն է դարձել գերազանց.—
 Բայց տե՛ս, խաւարի մէջ վառ աստղը փայլեց
 Եւ մեզ ողեցոյց մի պայծառ նա յայտնվեց.
 Երեան մէջ, կոււի մէջ աշխարհն մրկրտված,
 Մէկ օր կրտեսնէ մեծ բաղբի յաղթանակ...
 Եղբայր իմ, եղբայր իմ, քեզ ձեռս եմ մեկնած—
 Տեսնում չես, կանչում է մեզ սուրբ նրպատակ...

1890.

ՄԻԱՅՆ ՄԻ ԳԻՅԵՐ.

Գարձեալ մի գիշեր... Գարձեալ մտքերը
 Մըռայլ ամբոխով զլիտումս են խոնվում,
 Վըրդովում հողիս և ձիգ ժամերը
 Միայնակութեանս իմ թունաւորում... *

Ահա՛նք, կեանք, ոչ, երազ չես դու մի տրտում,
 Ել սարսափելի իրականութիւն:
 Եմենայն-մի միտք, ամեն-մի զգացում
 Բացարձակ ասում անդադար մարդուն,
 Որ դու կաս, դու կաս քո ողջ մերկութեամբ—
 «Պատրանքներով ու ահռելիութեամբ»
 Եւ դու, խեղճ էակ, վրտիտ, բայց Լբարձր,
 Մարդ,—անյիշելի ժամանակներից
 Եռաջացել ես դու էականներից,
 Որ քո յանդիման այժրմ շատ են ցածր.
 Ենհուն դարերի ընթացքում խաւար,
 Ենհուն ճիգերի, տոկունութեան գնով
 Եյսօր դարձել ես տէր նրանց համար,
 Եյսօր զսպում ես նրանց հրգօր կամքով:
 Բայց մի ժամանակ փոքր էիր, տրկար,
 Վայրի գազանից չէիր տարբերվում.
 Թափառում էիր մրթին անտառում՝
 Ենկողու, անբան, չնչին, անկատար:
 Բայց բնութեանդ հըսկայ ոյժերով
 Վանդաղ ու դրժուար, մանր քայլերով
 Պու զիտցար քեզի աւելի կրթել
 Եւրջ տիրող բնութեան հետք միշտ կուել:
 Եւ դու սկսար տեսնել ու մութ հասկանալ
 Եյն, ինչ չկարեցան այլ կենդանիներ.
 Վո նեղ ուղեղում ըսկսան արթնանալ
 Վիտակցութիւնը ու նրա պատկերներ:
 Բայց հէնց առաջին թոյլ քայլափոխին
 Վո զիտակցութեան՝ դու տեսար մահը,
 Զըհասկացար միտքն այդ երևոյթին
 Եւ քեզ չըտիրեց սարսափն ու ահը,

Ել դու կարծեցիր թէ նա քուն է լոկ,
 Վուն երկարատե: Եւ դու անմորմոք
 Թաղեցիր եղբօրդ, խաբված այն ցնորքով,
 Թէ նրա հոգին մնում է կենդանի,
 Թէ մէկ օր պէտք է նա կրկին զարթնի
 Եպրելու համար վերըսկսած կեանքով,—
 Բայց նրանից մնաց լոկ փոշի անպիտան:
 Տըգէտ, սարսափած—զրտած կարծեցիր
 Ստեղծագործութեան մէջ վեհ բընութեան
 Պաղտնի զօրութիւն—անտես, ահալի—
 Եւ ըսկսար կուռքեր քեզ կառուցանել
 Անդանիներից, ծառ ու զեռունից,
 Բնութեան բազմազան հրգօր տալլերից:
 Եչքըդ ամպերի խորերն էր ընկել—
 Որտան էր թնդում այնտեղ անարգել—
 Ծընրաչոք ընկար դու նրա առջև.
 Եչքըդ շըւացրեց օսկեղէն արև,
 Որ գեղ վառվում էր ծովի երեսին,
 Վոդով պաշտեցիր դու այդ երկուսին.
 Վիշերվայ ժամին խաղաղ, անվրդով
 Տեսար սիրադէմ, մեյամաղձ լուսին
 Երծաթէ առուին ժպտելիս սիրով—
 Նրանց պաշտաման առարկայ դարձրիր.
 Եմեն-մէկից էլ դիքեր շինեցիր,
 Յետոյ երկնային ոչինչը կապոյտ
 Պու գերմարդկային վայր հռչակեցիր.—
 Վո կրճքիդ վըրայ ցաւերի մեծ կոյտ,
 Ենցիալդ քեզ անյայտ, ապագադ էլ մութ,
 Պու այդ բոլորով սրտով ահալի,
 Խեղճ, մրկիթարել քեզի ջանացիր...

Մինչդեռ ստրուկ հրդոյ բնութեան օրէնքին՝
 Գու աճում էիր, զարգանում կեանքով...
 Ենցան բիւր դարեր... Վո քննող մտքով
 Ելում ըմբռնել ես էութեանդ ողին,
 Ելում թափանցել ես գաղտնիքը բնութեան,
 Շատ բան առել տակ քո իշխանութեան
 Եւ գիտես, որ լոկ հիւր ես անցաւոր
 Երկրազնախո. որ սկիզբ ունէիր՝
 Առնենաս նոյնպէս վախճան դու մէկ օր.
 Բայց մինչ այդ վախճանն,—ինձ պատասխանիր,—
 Ի՞նչ է քո կոչում... Աեանքն անհամար
 Գարերի ծոցում եղել է հրկար
 Պատերազմների մի շարք անվախճան—
 Ենթապառ աղբիւր մարդու գոյութեան:
 Մինչ վախճանըդ դրանք կդադարե՞ն, ո՞վ մարդ,
 Թէ կեանքն է ահեղ ու մշտական մարտ...
 Աեանք—սահող հնչիւն, որ հրդէ ձեռով
 Քնարի լարերն են հեռուից լսեցնում.
 Արտատվեցան այն լարերն գողալով—
 Հնչիւնը մեռաւ: Ելդպէս վերջանում
 Եւ կեանքը մահի սառը հարուածով:
 Մարդ—մի բարդ ձուլուածք, անթիւ, անհամար
 Մանր մասնիկներից օդային՝ կազմված.
 Ենարգել փրչեց մահու շունչը սառ—
 Եւ ահա չորս կողմ նրբանք ցրվեցան,
 Եւ այն, ինչ դեռ նոր էակ էր՝ զգացմանց
 Ու մտքերի տէր, հիմա անգուման
 Գառնում է ոչինչ: Մահ, որ տխրազին
 Չայնով ես հնչում մարդու ականջին,
 Ո՛չ սարսափելի չես դու բնաւին.—

Լարեր քնարի, որ անհամաձայն
 Ու աններդաշնակ են միմեանց ձայնում,
 Մէկ ամբողջութեամբ հնչիւն քաղցրաձայն
 Երեկոցից կազմել կարող չեն լինում:
 Մահ, դու լոկ բնութեան հըրու ոյժ ես մի,
 Վայքայումն իմ մէջ գտնված տարրերի:
 Մահ, սոսկատեսիլ կերպարանքերով
 Ձեռ յայնընում դու, սարսափ ազդելով,
 Եյն օրից, երբ որ թափանցեցի ես
 Վո մութ խորհուրդը: Աչինչ—դա դու ես...
 Խաւար անցեալի խաւար ընթացքում,
 Ժամանակի լայն ու անհուն ծոցում
 Որքան սերունդներ եկել են, գնացել
 Երեկոց արածը ժառանգին կտակի:
 Որպէս հրկաթէ ձուլուածքի միջով
 Եմենքն, ամենքն անցել նոյն ճանքով,
 Ենթարկվել բնութեան միշտ նոյն օրէնքին.
 Եւ մենք—մենք անցնում ենք նոյն ձուլուածքով,
 Մի և նոյն օրէնք իշխում մեր կեանքին:
 Եւ հեռուում—մթին, խոր ապագայում,
 Վերբախն նոյնը, նոյնը պիտ լինի,
 Եւ միշտ դէպ առաջ մարդրն ընթանում,
 Միշտ ապագային տալով հրանի...
 Որպէս կարճատե մի քամու շունչը,
 Որ արձակելով իր դժգոհ մտուցը
 Բայց տրկար, ինչպէս ճիչ մանկան կրծքից,
 Մահում հրկնի սկայ ծաւալի վրայով—
 Ենթիւ սերունդներ—վիժվածներ մեզից—
 Միմեանց կեանք տալով ու յաջորդելով

Երկրագունտս իրենց կրսփռեն ցանցով,
Թողնելով հետքերն իրենց կարճ կեանքի,
Հիւրեր անցաւոր անցաւոր վայրի....

Բնութիւն, ե՛ս, մարդըս, այժմ քեզ եմ դիմում,
Իմ ազահ մտքիս անհանգիստ հարցին—
Քեզնից պատասխան եմ ես ըստասում—
Օարաւ, որ ըզգում իմ արկար ոգին:
Ինչո՞ւ թողնելով քեզի ճանաչել,
Պաղանի օրէնքիդ միտքը թափանցել,
Յնորքներն մարդկութեան մանուկ հասակի
Ինձ հասկացրերի. նրա երազների
Ու անուրջների ոչնչութիւնը—
Պըտուղներ, որ տվել արգիտութիւնը—
Եչքիս բացեցիր. լուսատու խօսքով
Յուզեցիր միտքըս քեզած, անվըդով:
Երկնային վըսեմ, լայն հօրիզոնից,
Որ դերմարդկային դրախտ էի կարծել,
Եհնա, իջեցրի յոյսերըս անբիծ
Եւ իմ խաբուսիկ երազներըս էլ:
Իջեցրի ներքև ես այն բոլորը,
Ինչ որ դեռ մանուկ մարդկութեան համար
Ազգմում էր միակ սփոփանք, մըխիթար.
Իջեցրի ներքև, այո՛, բոլորը.
Եւ ազահ սրտով քաղցած գազանի,
Աարծեա վերաւոր անձնասիրութեամբ,
Ենկիղճ խաբվածի խորին դառնութեամբ,
Խաւարում տեսած պարզ շողը լոյսի,
Բոլոր կուռքերը, որ պաշտում էի,
Պահապիժեցի, ցասկոտ փրշրեցի:

Եւ այսօր, ահնա, առջևդ եմ կանգնած,
Եռանց հաւատի, առանց պաշտաման,
Օաղըած երազներս ցնորամիտ, ունայն,
Ճակատագրրիս միակ տէրն դարձած,
Եւ յուզված հոգով, տարակուսանքով
Հարցնում եմ քեզնից իմ հրգօր ձայնով,—
Ինչի՞ համար եմ, ասա՛, ես ապրում....
Քո վեհ զեղըթեամբ ու զոռ սառնութեամբ
Ինձ, իբրև որդնի, ճնշում ես, նեղում,
Երհամարհական ու խուլ լըռութեամբ
Յանգուղն հարցիս ես դու պատասխանում....
Բայց որպէս հրմուտ, քննող վերաբոյժ
Հիւանդոտ մարմին բացում զործիքով,
Քեզ կրպատառէ խելքիս հրպարտ ոյժ,
Օածուկ խորերըդ քո թափանցելով:
Եւ լսում եմ, ինչպէս նա ինձ բարբառում
Սեանքի գաղտնիքը, նրա միտքն ու կոչում.—
«Երկրազնտիս վրայ է սկսած քո ծագում,
«Եյնտեղ էլ կլինի մէկ օր քո վախճան.
«Երկրազնտիս վրայ լոկ ունես դու կեանք,
«Եյնտեղ էլ կլինի քո մութ գերեզման.
«Եյնտեղ է քո ցաւ, լաց, բաղդ ու բերկրանք,
«Եյնտեղ է քո դժոխք և արքայութիւն:
«Հայրերդ ապրել են, կոււլ օրնիբուն,
«Որ դու աւելի երջանիկ լինես,
«Եւելի լաւ կեանք կըտակել են քեզ,
«Տանելով շիրիմ իրենց ցաւերը:
«Քեզնից յետ կըզան նոր սերունդները,
«Զարթիւր մի քանի փուշ այժմեան կեանքի,
«Որ նրանց ճանապարհն աւել հարդ լինի:

«Բազդն ու խնդութիւն գալիք մարդկութեան—
 «Մա է նպատակը քո կարճ գոյութեան:
 «Տանջվել, մարանչել, ապրել շարունակ—
 «Ահա քո կոչում: Տոկս, աշխատիր.
 «Մեծ է ճանապարհդ: Արդայ պանծալիր
 «Օրն, երբ կըհնչէ լոյսի յաղթանակ...»

Արպէս բոցեղէն շնչով փայփայված,
 Արպէս կախարդված դիւթական խօսքով,
 Խորին մտքերով մնացի պաշարված,
 Այրվող ճակատով, վրդովված հոգով...
 Երբ որ ծանրացած թերթերունքները
 Բարձրացրի, գուրսըն ընկան աչքերը—
 Արշալոյսն վառվում էր արևելքում...
 Միայն մի՞ գիշեր... Այնքան ըզգացում,
 Այնքան մրտածում, տանջանք ու յուզում—
 Մի՞թէ այդ բոլորը կրեցի միայն
 Մի կարճ գիշերվայ լի կարճ ընթացքում...
 Իսկ կարծես թէ ես ամբողջ մարդկութեան
 Ամպոտ անցեալի ողջ կեանքը կրեցի,
 Իսկ կարծես թէ ես նրա հրակայական
 Տանջանք ու կռիւներն անձամբ փորձեցի.
 Նրա ողջ անցեալով ես մէն ապրեցի,
 Նրա ապագայի մոլթն թափանցեցի.—
 Անցեալը—կրօած, ես ինքրս—ներկան,
 Մտքով ու հոգով ապրած—ապագան...
 Եւ այդ բոլորը միայն մի՞ գիշեր...
 Միայն մի գիշեր...

Վառ ճառագայթներ

Ոսկեղէն, պայծառ բոցավառվում են

Երկնածրբի վրայ խաղաղ, փառաւոր,
 Աեանքի նըշաններ չորս կողմ զարթնում են...
 Շուրջ հրաշալի է... Ահ, դարձեալ մէկ օր...
 1890.

Մ Ա Ն Կ Ա Ն

Վնքոյ զգացումով, զգացումով ցաւոտ,
 Մանկիկի, ո՞վ պրտուղ սիրոյս հաւածված,
 Ես գրկած եմ քեզ: Չսպելով դառնոտ
 Ու ծանրը շունչս եւ դողն ինձ տիրած,
 Անարատ սրտիդ բաբախումները
 Ականջ եմ դրնում: Գաղտնի հրմայքով
 Նայում եմ ես քո քնքոյլ այտերը,
 Գէմքդ փայլում է պայծառ ժրպիտով,
 Մանկական ձայնդ քաղցրալուր հնչում:
 Այո՛, այո՛, դու նըրան ես նրման.
 Նոյն հրապուրանքը, որ ինձ կախարդում,
 Նոյն գաղտնի կայծը, կայծը դիւթական:
 Եւ համր դրաւումով, համր զուարթութեամբ,
 Ես քեզ սեղմում եմ կրծքիս քնքշութեամբ...
 Ո՛չ ո՛չ, ո՞վ մանուկ կրծքիս խորերը
 Գու մի թափանցիր... Ահ, ինչո՞ւ համար.
 Գա զիրք է՞ գրված լեզուով քեզ օտար,
 Նըրա փոշոտած, հնացած թերթերը
 Գու չես հասկանալ... Այնտեղ մտքերը
 Իմ տըխուր, տըխուր իմ զգացումները,
 Գառն զիտակցութիւնըն ունայնութեան
 Մրրկալի կեանքիս

Եւ յողնածուծեան ու անզօրութեան
 Իմ հրպարտ կամքիս,
 Պարտականութեան վըսեմ պատկերը,
 Հիասթափութեանս կոծող լարերը—
 Արձքունս այդ բոլորն խռնված են կուտված՝
 Միմեանց դէմ ներքին պատերազմ մղղած:
 Իսկ դո՛ւ... Եյնպէս չէ՞, չեն նըսեմացնում
 Վո պարզ ճակատը տրտմութիւնները.
 Եյնպէս չէ՞, ոչինչ դառն նախազգացում
 Չէ թափանցել քո սրտիդ ծալերը
 Վու չես գուշակել, որ քեզ մարդերը
 Վեռ օրօրօցից հալածել են սկսում:
 Եւ դու ուրախ ես, և երջանիկ ես
 Ենդիտակցական միջոցում կեանքիդ,
 Զինչ երազներն այցելում են քեզ,
 Փափուկ օրօրում մեզմ քունըն աչիդ,
 Յափշտակութիւն ու կախարդանքը,
 Սիրոյ քաղցր թոյն, սիրոյ բերկրանքը
 Վեռ ըսպասում են քո ապագայիդ...
 Եւ կը մեծանաս... Աեանքը կը բացէ
 Իր լայն թևերը և քեզ կը զրկէ
 Եւ որպէս փայտիկ ծովի երեսին,
 Ար սկսես երերալ նրա ալիքներում:
 Արքեր ու ցաւեր, ժպիտ ու դառնութիւն,
 Ինդում ու արցունք, ոյժ ու թուլութիւն
 Աեանքի կատաղի, ուժգին յորձանքում
 Միմեանց կյաջորդին, քեզ այցելելով,
 Վեզ յափըշտակել, գրաւել ջանալով:
 Բայց այդ փոթորկում դու մի՛ կուրանար,
 Եյդ պատիր կեանքի հետ հաշտ մի՛ մընար:

Վիմտկահանդէս է դա մի թըշուտո:
 Եյլ դըժոխային դրա աղմուկներում
 Մեծ նըպատակի միշտ փայլուն, միշտ վառ
 Եստղին հետևիր, որ քեզ բարբառում:—
 «Պոկիր դիմակը դէմքից մարդերի,
 «Յոյց տուր բազմութեան վերքերը նեխված
 «Եւ ընդ միշտ նզոված աւերակների
 «Այս այս կործանվող, հնացած աշխարհի,
 «Այստեմ ճշմարտի ողով զօրացած,
 «Առուցիր աշխարհ նոր, երանելի»:

19 Դեկտեմբեր, 1889.

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԻՐ

Արպէս խաւար մէկ անդնդի խոր յատակ,
 Թաղնված անհուն ժամանակի խիտ, անթափանց քողի տակ,
 Ո՛վ ապագայ, աստ, ի՞նչ ես պատրաստում
 Եյն սերընդի համար, որ այժմ կեանքի մէջ է ոտք կոխում:
 Շատ ծանր են մեր կեանքի օրերն առաջին,
 Մեր նայեացքը մըտախոհ է, տխրազին
 Եւ մեր կուրծքը դըժուարութեամբ շունչ առնում:
 Մենք աճում ենք շըջանակում մի նեղ, ճնշված ու տրտում:
 Ո՛չ փայփայած զգացումները մեր սրտի,
 Ո՛չ վեհ, ազնիւ մտքերը,
 Ո՛չ անուրջներն, ո՛չ ձգտումներն մեր վըսեմ ու կենդանի,
 Ո՛չ մեր վառվռուն տարիների հրապոյրը—
 Չունի ոչ մէկն ազատութիւն ըզձալի,
 Չկայ ոչ մէկին լայնութիւն,

Եւ զողով է արձակվում մեր ամենայն մի ցանկութիւն,
 Եւ զեռ մատաղ՝ մենք վախենում ենք թառամել տանջալի:
 Եյդպէս ծաղիկն առաւօտեան նուրբ օդում
 Հազիւ ըսկսած իր կոկոնը բաց անել,
 Յերեկվայ սօթն ամանիկն է խիստ պրում,
 Որ չորացած՝ կոկոնն իր մէջ է ճնշում,
 Վամում նրա հիւթ և չէ թողնում աղատաբար բացըել:

Հազիւ ըսկսած մթնոլորտումը խեղդիչ
 Վրսեմ ու մեծ նպատակների, նեկտարի համն ճաշակել
 Հազիւ ըսկսած նրա կենսատու շողիովը գրբաւվել
 Եւ արվել նրա զօրութեանը կախարդիչ—
 Մեղ հալածել ըսպառնացող հետեանքըն այդ գրբաւման
 Մեր ողջ ոյժն է կրւանում,
 Մեր սրտի մէջ արիւնն պաղում անգուման
 Եւ կրծքի վրայ մեր գրբուխ թոյլ քարշ ընկնում:
 Ծանված, աճած շրջաններում նեղ, երկչոտ,
 Ուր ողջ գեղը, սուրբը, վսեմը հալածանքին է մատնվում,
 Մեղ քաջութիւնն յետոյ օտար է յայանվում,
 Մենք խորշում ենք պրսակիցը տատասկոտ:
 Եյդպէս երկչոտ զինւորն մարտից է փախչում,
 Եւ ընկերոջ ու թրշնամու շրթներովն անիծված՝
 Իր ամօթը սրտի խորը թագցրնում,
 Մինչ անկիւնում վայր ընկած՝
 Նրբա սուրբ ժանդոտվում:
 Եյսպէս կանցնէ տարին տարվայ ետեից,
 Շղթաներով կաշկանդւած մարդկութեան
 Բաժին կը գան նոր չարչարանք, նոր կսկիծ
 Եւ արցունքըն ու արիւնը նրա վէրք բուժել կը ջանան:
 Իսկ մենք արդէն շուտ, կանխապէս ծերացած,

Մարդկութեանը ոչ մի պրտուղ չը տըւած,—
 Ել մեզ վսեմը յափրշտակել չէ կարող,
 Երգար ձայնի համար կլինեն մեր սրտերը խըլացած
 Եւ ճշմարիտն արձագանգներ սիրագող
 Մեր հոգու մէջ ծագեցընել չէ կարող,
 Չենք հանդիպիլ խիստ զայրոյթով վատութիւն,
 Չի ըզգացնիլ մեզ ուրիշի խեղճութիւն:
 Եւ այն ահեղ ժամանակը, երբ հերոսըն անձնուրաց՝
 Սուրբ խօսքերով շրթներին՝
 Գէպի պատիժ, որ սահմանել նրան չաստուած,
 Խորոխ կը դիմէ զլուխը՝ հըպարտ, ճակատ՝ բաց,—
 Մենք հազիւ հազ թողնելով մեր բոյնն անգին,
 Ուր թագնըւած էինք մարտի գոռ ժամին,
 Փուչ ու փըքուն խօսքեր ազատ շաղ տալով,
 Ողջունելով երանաւէտ բերկրանքը,
 Սուրբխանանք, որ ուրիշի՝ վեհ մահով
 Փրկըւեցաւ մեր կեանքը:

26 Յունվար, 1888.

Հ Ա Տ Ո Ւ Ա Փ

«Աւագակը» պօեմաից.

I.

Եյնտեղ, ուր ջինջ ու բիւրէղէ
 Երկինքն է միշտ զեղանում:
 Եյնտեղ, ուր ծով մի զըմբուխտէ
 Ալիս շիթով աղամանդէ,
 Գողացնելով իր գրկում

Եստղների դէմք արծաթէ,
 Կամ մրտայոյց օրօրվում:
 Եյնտեղ, ուր վեհ արմաւենի
 Գեղ հասակով բարձրացել,
 Հովանիի տակ նոճիի
 Նուրբ նարկէսն է թագ կացել:
 Եյնտեղ, ուր ճոխ այգու վարդի
 Գեղ կոկոկին նայելով,
 Սիրահարված ծիծառն մենի
 Արկղացնում է երգն իր սրտի
 Սիրաբորբոք ձայներով:
 Եյնտեղ, ուր կայ խաղող հասուն
 Գեղն գոհար փնջերով,
 Ուր ծաղիկներն պերճ, բազմադոյն
 Հարբեցուցիչ բուրմունքով
 Իղճ սիրասուն, իղճ կրքերի
 Միշտ պարգևում են մարդուն:
 Եյնտեղ, ուր շատ թռչունների
 Բազմատեսակ ու նախշուն
 Երամները ճեմում հրպարա
 Ուր կարապը նազելի՛
 Շատրըանի ջրում հանդարա
 Սահում է և շէթերի
 Եդամանդէ անձրևի տակ
 Լողանում է քնքշաբար:
 Ուր քաղցր օդում, արևի տաք
 Ճառագայթի լոյսից վառ
 Եմբողջ բնութիւնը գեղունակ
 Բզկում է բաղդ անըսպառ,—
 Եյդտեղ անբաղդ է լոկ մարդը,

Նրա համար չէ այդ դրախտը,
 Եյդտեղ տիրում գերութիւն
 Եւ կրքերի զաղեր փտար,
 Եւ տանջանք, և՛ բռնութիւն:
 Եյդտեղ կանգնած է պճնազարդ,
 Պէսպիսադոյն պարտիզում
 Համիդ փաշն շքեղազարդ
 Եպարանը, ուր անցնում
 Նա իր կեանքն արևելեան
 Ջուարձութեան մէջ անդադար,
 Չիմանալով ծայր ու սահման
 Իր հաճոյքին. ուր նրա հրաման
 Գերիների մէկ ըստուար
 Խմբով խոնարհ միշտ կատարվում:
 Ուր նրա կամքի յանդիման
 Ուրիշի կամքն է չքանում,
 Ուր նրա խիստ ու սոսկական
 Նայեացն այլն դողացնում:
 Ուր նրա շքեղ մեծ հարեմում
 Նրա բազմութիւ կիներին
 Խընամում են ու ծառայում
 Նաժիշաները խմբովին
 Եւ ներքինին դիտող աչքով
 Համըրաքայլ միշտ շքում:
 Ուր անկանոն խմբակներով
 Անուշաբոյր պարտիզում
 Նրա կիներն են նազիկ քայլով
 Ու ճոխազգեստ մերթ ձեմում:
 Հարաւային վառ արևը
 Նախանձում նրանց գեղութեան

Եւ լուսինը նրանց աջէր
 Եւսկի թագնվում է ետէր՝
 Եւսթաճար, տրամական:

II.

Բայց կայ մէկը նրանց միջին,
 Որ ամենքից է գեղանին.
 Նա սակաւ է մասնակցում
 Նրանց ուրախ ըզբօսանքին,
 Սակաւ նրանց հետ խօսում:
 Մարիամըն իր ոսկեզօծ
 Ու թաւշէզարդ սենեակում
 Մենակ մընում է մշտակոծ,
 Ելլից թագուն արտասվում:
 Շքապատող շքեղութիւն,
 Եւնէ բանի հարրստութիւն
 Զէ գրբաւում նրա սիրտը
 Եւ պալատի զըւարձութիւն
 Զէ փարատում նրա վեշտը:
 Բզգեստներըն իր պճճագարդ,
 Ոսկիների շարքըն էր
 Եւ ազնւագոյն քարերի զարդ,
 Հողաթափներ ոսկեթեր
 Որ կը շարժեն այլի նախանձ,
 Նրան նեղում են ու ճնշում,
 Տրկար, գժբաղդ դարձնում նրա անձ
 Եւ մարմինը նրա պատում
 Որպէս շղթայ ամբրապինդ,
 Որպէս օղակ օձապտոյտ,
 Տալիս հոգուն նրա մոլեխինդ

Եւ ցաւերի ծանրը կոյտ:
 Օ, իրպիսի ուրախութեամբ,
 Բզմայլիլ սրահեշտութեամբ,
 Երջանկափայլ արցունքով
 Եւ իրպիսի ազահութեամբ
 Ու ժպտաբեր զգացումով
 Նա կը ջարթէր այդ գեղ զարդեր,
 Կը պատառէր հարուստ զգեստներ
 Եւ կը հագնէր աղքատիկ
 Գեղջիուհու խեղճ, պարզ հագուստներ,
 Չգալով իրեն երջանիկ:
 Եւ նման թռչնի աղատասէր,
 Իր վանդակից դուրս թռած,
 Նա կը թռչէր սար ու դաշտեր,
 Կայցելէր իր ծանօթ վայրեր
 Եւ լի կը ծքով ըզմայլած,
 Նա կը շնչէր օդըն ազատ,
 Վրճիտ օդը լեռների,
 Կը խմէր ջուրը պաղ ու առատ
 Եկանակիտ առուակի:
 Օ, ինչպէս քաղցր գուրգուրանքով
 Իր նայեացում խաւարած՝
 Հեռաստանը գաղտ, անվրդով
 Նա կը դիտէր գրբաւված:
 Եւ հեռուից նրա ականջին
 Ահասնէր երգի հնչեւններ,
 Երգ գժբաղդի, երգ տխրագին,
 Ուր կան այնչափ սնքոցներ,
 Չայն գեղջիուհու, որ երգելով
 Իր դառն օրհասն է ողբում,

Ըստրկութեան անէծք տալով,
 Հանգիստ ըզձուս, աղերսուս:
 Եւ կը լըսէր այդ անբոցներ
 Երկարաձիգ ժամերով,
 Պէտք գեղջկուհին նա կը վաղէր,
 Ազատութեան գաղտնիք կասէր,
 Ընկեր նրբան դառնալով....

Օգոստոս, 1889.

ԱՐՄԱԻՆՆԻ

Հարաւի երկրում կապոյտ երկնի տակ,
 Երևի կիզել շողերով շոյված,
 Մէկ արմաւենի վեհ, բարձրահասակ
 Երկնքի կրճքին զըլուխն է զըրած:

Մերկ է նրա սիւնը. բայց բարձրը կատար
 Վալարազեղ, պերձ թագով է պսակված,
 Ճոխ զարգարում է պրտուղների շար
 Շքեղ ձիւղերը՝ տաք օդով սնված:

Եւ եգեմական գեղ թռչունների
 Հողեզմայլ նուագներ սքանչաձայն հնչում,
 Զերմաշունչ զեփիւռն սահում փափկալի
 Եւ արմաւենին հրպարտ օրօրվում:

Նրա շուրջը թրգուկ ոստեր կան խունված,
 Օածկված տերևով մինչ գետին դալար,
 Նրա տակ մրմնջում առուն սիրոյ լաց
 Եւ զով հոսանքով նրան ջրում անգագար:

Վայց կարձ ոստերը լոկ արմաւենու
 Մերկ սիւնը տեսած, ծաղրում են նրբան.—
 «Ինչ խեղճ ու մերկ է նա, տես, սլ առու,
 «Ինչ չոր ու անզարդ, մէն ու արտմական»....
 15 Յունվար, 1890.

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Բանաստեղծը տաւիզ հնչելն
 Առաւ ձեռը՝ ներշնչված,
 Մտքի աչքով սլացաւ հեռուն,
 Ճակտին փայլեց վրսեմ կայծ—
 Եւ նա խրվեց... Պողոզաջին
 Լարերն. որպէս մեղմ թրուիչ
 Երկնամբարձ՝ հրեշտակային,
 Նրա ձայները կախարդէ
 Եգեմական նուագների հետ
 Խառնընցան և երկին
 Հնչելներով դեղ, քաղցրաւէտ
 Լքըրէցաւ այդ ժամին:

Եւ աստղերի փայլ խմբերը
 Նրբանց էին ուշադիր,
 Մեղմ ննջելով սկայ լեռները
 Նրանց հողեզմայլ ունկնդիր...
 Բայց մարդիկը կատաղեցան.
 «Տխմար»,— Էրզին զոչեցին,—
 «Ինչու ձայնովքո դիւական

«Տըւիր կսկիծ մեր սրտին,
Մեր խելքն, հոգին վրդովեցիր,
«Աշտամբեցիր կեանքն ու մեզ,
«Վառըն խօսքով ապտակեցիր.
Աորի՛ր և լա՛ւ մեզ պէտք չե՛ս»:

Այդպէս կրտոր ամպ միանում
Սիգաճեմ մութ ամպերին,
Նրանց հետ մէկտեղ ջրօղ ուզում
Վաշտեր, արտեր աշխարհին:
Սակայն քամին, դժգոհ քամին
Արտոր ամպին հալածում
Եւ նրա ընկեր խրոխտաղին
Նամպրից դուրս վտարում:
Իսկ տարագիր կրտոր ամպը,
Երբ հողմն առնում է դադար,
Իարձրը երկնից իր արցունքը
Առողում է մեղմաբար:

14 Յունվար, 1890.

31 ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 188.

Վարձեալ մի տարի... Եւ ի՞նչ եմ թողնում
Իբրև հետք ինձնից այն մեծ ու անհուն
Վատարկութեան մէջ, որ կրում է անուն՝
Ժամանակ: Ի՞նչ է յետոյ ինձնից մնում
Իբրև յիշատակ կենդանիների
Այս զրժոխքում, որ աշխարհ են կոչում:
Լքրայնում եմ ես պատուէրն իմ դերի,

Տալի՞ս եմ մարդկանց տուրքս իմ բաժին,
Ատակում եմ ես նրանց օժիտ դէժ չնչին,
Պարտականութեանս թելադրած գործեր
Թողնում են գոնէ ցանկալի հետքեր.
Թէ արդե՞օք հիւանդ ու հըպարտ կամքից
Հոգեկան ղոժերս արդէն ըսպառվում
Եւ իմ երազած, ըզձած կոչումից
Պիտի հրաժարվեմ... Ի՞նչ է ինձնից մնում...
Ոչի՛նչ, ոչի՛նչ... Ա՜հ, դուցէ կը մնայ հետք
Մի շարք սխալների անվնաս կամ անպէտք,
Յաւերի մի բեռ, հիասթափութեան
Աղի արցունքներ, վշտահար սրտի
Պատառած լարեր, անպերջ տրամութեան
Վառնութեան բաժակ, տանջանք սոսկալի,
Անկատար յոյսի քամված թոյնոտ հիւթ,
Խաբված երազի բեկորների կոյտ,
Յափշտակութեան խաբուսիկ խաղեր,
Պատիր հաւատը դէպ երջանկութիւն,
Տարակուսանքի ըսպանիչ ճիչեր՝
Չաղրը անձիս դէմ, ուր կայ դառըն թոյն...
Մի՛թէ դրանք էլ ինձնից չեն մընում:
Ա՜հ, ոչի՛նչ, ոչի՛նչ... Իսկ կարճ անցեալիս
Յիշատակներն ուրախ ու տրտում,
Վողգոջ ու զազանի իմ զգացումներս,
Սիրած մտքերիս ելէջները,
Նրանց հմայքն ու թոյնը, նրանց գոռ խաղերը,
Իսկ սիրոյս քաղցրը երանութիւնը,
Նրա մեղմ ըսփոփանք, նրա տրեխութիւնը,
Իսկ այն, ինչ դեռ ես կրում եմ տրամական,
Մըռայլ իմ հոգում անյայտ ամենքին,

Ինչ զգում եմ իմ մէջ ամեն-մի վայրկեան,
 Ինչ դեռ թաղուն կայ իմ դիտիս միջին,
 Ինչ դեռ լիքը կայ իմ մէջ անծանօթ,
 Որոնց ըզգում եմ կարիքն ասելու,
 Եւ ինչ վերջապէս, ժրպիտով հեղնոտ
 Ինձնից ապագան է պահանջելու.—
 Երգեօք դրանք ինձնից հետք չե՞ն թողնելու...
 Ոչի՛նչ, ոչի՛նչ... Ելլ յորպէս ուրուական
 Մի թափառական, որպէս քամու շունչ
 Ենհետ, մեղմասահ ու վայրկեանական,
 Որպէս մարդերի դէմ խուլ մի տրտունջ,
 Որպէս մեռնողի վերջին թեթեւ շունչ,
 Եկայ, ե՛մ այսօր և կլինի իմ վերջ
 Ժամանակի սկայ տարածութեան մէջ.
 Ար դառնամ փոշի—տրկար զո՛հ քամուն,
 Եւ ինձնից կը մնայ—լո՛կ դատարկութիւն...

Հ Ա Տ Ո Ւ Ա Ց

«Յովնան» դրամատիկական պօէմայից.

Յ ո վ ն ա ն.

Եւ ահա այն խեղձ, թրշուառ երկիրը,
 Հին, հին փառքերի աւերակները...
 Հարազատ աշխարհ, օրօրո՞ց վշտի.
 Երգե՞օք քո օգն է, որ շնչում եմ լի:
 Եփսոս, շատ ծանր է նա կրճքիս համար,
 Թունաւորում է հոգիս վշտահար:

Խոժոռած Մասիսն այնտեղ վե՛հ կանգնած,
 Եւերակները կոյտերով ցանված,
 Գիւղեր աղքատիկ, վայրեր մէն, անշունչ
 Չբզված է երկիրն լուռ ու ցաւաշունչ:
 Ե՛հ, և կարծել որ կը գայ ժամանակ,
 Երբ այստեղ դուցէ լավէն համարձակ
 Հայ մարդու ձայնի ազատ արձագանգ,
 Եւ նա ման կըգայ այստեղ անվրտանգ,
 Միրտը լքցըւած խղձերով շոյած,
 Խեղքըն ու հոգին զօրութիւն առած,
 Մոխրի տակ թաղած բոլոր չարչարանք,
 Պատիւը կանգուն, վարում ըղձած կեանք:
 Աարծել, որ մէկ օր աւերակները
 Իսպառ կը կորցնեն իրենց հետքերը,
 Որ դրանց հին տեղում համով ու հոտով
 Գիւղ, շէն կրկանգնեն հրապուրիչ տեսքով,
 Աբսնեն յուսոյ սիրուն ծաղիկներ,
 Արհոսեն մտքի առատ առուններ,
 Չօրացած ոգով կաճեն սերունդներ...
 Հայրենի՛ դաշտեր, ո՞ւր է ձեր ժրպիտ,
 Չեր տեսքը զըւարթ ու գեղափրթիթ:
 Եւսո՞ղ, այդ թափված բիւր աւերակներ
 Եջքիս թըլում են խուլ շիրմաքարեր:
 Գերեզմանատուն են դու տիրազին,
 Գո՛ւ, իմ հայրենիք թըշուառ ու անդին.
 Գերեզմանատուն են քո դաշտերը,
 Գերեզմանատուն են քո ձորերը,
 Ուր ոսկրներն համար հայկական
 Գետակներ կըգում օրօր լալական.
 Գերեզմանատուն են քո գիւղերը,

Գերեզմանատուն են քաղաքները,
 Ամեն-մի բաց տեղ, ամեն-մէկ անկիւն
 Գերեզմանատան տիրում պաղութիւն,
 Եւ դարեր ձեմել—բայց դու մենակեայ՝
 Գերեզմանական քնից դեռ չես զարթած...
 Իբրև մենակ դև դրժուքը թողած,
 Ըստուէրի նրման մոթ ու խոժոռած,
 Թափառում եմ այս գերեզմանատան
 Աւերակներում: Ես անբաւական՝
 Ի՞նչ եմ որոնում դրանց խրուժեան մէջ,
 Մինչդեռ տանջում է ինձ ներքին մի վէճ:
 Ի՞նչ եմ ես ուզում, ի՞նչ դրաւվում յուսով,
 Որ բարձրը, յանդուզն ու դժգոհ ձայնով
 Գերեզմանատան քունն եմ վրդովում,
 Աւերակների հանդիսան խանգարում:
 Փնտռում եմ արդե՞օք այնտեղ զօրութիւն,
 Որ կարողանայ հանել դրդողիւն,
 Սոսկատանջ կրճքի աղաղակներով
 Տապալել կուռքը բռնութեան խրուով:
 Անդանութիւն եմ ուզում տալ արդեօք
 Աւերակներին այդ մենակ, անոք,
 Երդե՞օք դրաւված եմ այն յուսով վրսեմ,
 Որ լոյսը կյաղթէ խաւարին նրսեմ
 Եւ ճակատագիրն սև թըշուառութեան
 Տեղ կրտայ բաղդին ու երանութեան...

 Եւ դո՛ւ, Մասի՛ս, որ դիմացս ես կանգնած,
 Չէ՛ մի երազում զմայլիչ, բայց տանջող,
 Որ քեզ տեսնում եմ. այլ վեր ամբարձած՝

Երկնի խորերը քո սարսեցրնող
 Ու քո վայրենի վեհագունութեամբ,
 Գլուխըդ պրսակված ձիւնափայլ թաղով,
 Գու ի՛նքդ ես, Մասիս: Թո՛ղ տուր անձկութեամբ
 Անճոռոված ճակատ խոնարհէ փութով
 Առջևդ ծընրաչոք: Թո՛ղ տուր դառնացած
 Մի շեթ սառ արցունք աչքիցդ ամպամած
 Աթէ կրճքիս վրայ այրվող ու ցաւոտ
 Եւ մեղմէ նրբա յուզումն ու ամօթ:
 Եյո՛, ամօթ եմ ըզգում քո հանդէպ.
 Չըկայ փառքդ այլ ևս. անցեալ կեանքիդ վէպ
 Թըլում է զմայլիչ երազ վաղեմի,
 Ամ յիշատակ դառն, թէև պանծալի.
 Քո տակ երկիրը՝ խաւար գերեզման,
 Իսկ դու ... դու նրան վրան հըսկայ մահարձան...
 Ի՛նչ ըզգում եմ ես մի հըզօր ողի
 Սաւառնում է վրան զլիւիդ ծերունի.
 Ես զայրանում է քո բուքերի հետ,
 Քամուդ հետ անբուն, իջնում սիրաւէտ
 Գէպ ցած՝ երկիրը, սահում նրա վրայով,
 Մէկ ինչ-որ գաղանիք նրան շըշնջելով:
 Երդե՞օք ապագայ քո մի նոր փառքի
 Չէ՛ զաղանիքը դա մեծ, երանելի...

 Երկինք ու երկիր... Ողի՛ն է արդեօք
 Որք շայաստանի, որ սրտով մորմնք
 Թափառում անբնակ ու ողորմելի,
 Աղերսելով բաղդ ու կեանքն ըզձալի:
 Ականջն՞վս արդեօք լսեցի այդ ծերին,

Ար իր սեփական կեանքով ողբաղին
 Հայրենիքիս կեանքն էր որ պատմում էր
 Եւ խեղդուկ ձայնով «Հանգի ստ» գոչում էր...
 Նրա ամբողջ կեանքն է մարմնացած բողոք,
 Բողոք թոյնալիւր ու հրոբարբոք,
 Ար նրա առիւծէ վերաւոր սրտից
 Սողալով դուրս է պրծնում ահալից...
 Գնահ, ո՞վ ծերունի, գնահ և թափառիւր,
 Կեանքիդ դառն վէպով սիրտը պատառիւր
 Գու հայ սերնդի: Երցունքներ առատ,
 Մաղձալի խօսքեր, ճիշեր յուսահատ,
 Յանդիմանութիւն ահեղ ու արդար
 Նրա գոռոզ դէմքին խրվիր վեհաբար:
 Եսա, թէ որպէս զօրեղե դիմաց
 Նա ստրուկ է վախկոտ, շողօքորթ, ատված,
 Արպէս անզօրի դլխին դահիճ է
 Եւ հրապարակում դաղտ խառնակիչ է:
 Եսա, թէ ինչ վատ, ծոյլ անգործութեան
 Եւ մի յանցաւոր ու դարշ թըմրութեան
 Եխտերում է նա ողջ խորասուզված:
 Եսա, թէ ինչ պաղ, լկտի ու փչացած
 Նրա սերտած փըքուն խօսքերն են քեզ թւում
 Եւ զըզուանքից քո մարմին դողացնում:
 Եսա ինչ կեղծ է նրա սերը դէպ քեզ,
 Արպէս աննպատակ, դատարկ է սահում
 Նրա կեանքն եսական տատանումներում:
 Արպէս ձգտումներն աղնիւ, գեղանի
 Յոյսերը ոսկէ, գործեր ցանկալի
 Ենմիտ, վատ կերպով նրանով են ծաղրված,
 Կենդանի ոյժեր ընդ միշտ կործանած:

Եսա, որ մայրերն չարչարանքներում
 Երկունքի տըւել են նրբան կոչում—
 Գնջել այլերի՛ չարչարանքները,
 Լինել փրկութեան աւետարերը:
 Բայց նա ի՞նչ արեց... Առչումըն իր մեծ
 Նա անխղճաբար ոտի տակ կոխեց,
 Գիմակով ծածկեց դէմքն ամօթահար
 Եւ թագնվեց բընի մէջ վախկոտաբար:
 Եսա, թէ որպէս այն բոլոր բարձրը
 Ինչով զըրաւվում են մեծ սրտերը,
 Օտար ու խորթ է նրբան մընացելը
 Արպէս չըղխտէ նա զընահատել
 Ճշմարտի ձայնըն ու արդարութիւն
 Եւ որպէս կեանքը նրա անմիտ, անգոյն,
 Բնաւ չըթողնելով հետք եր ետեւից,
 Մէկ օր վերացած կլնի աշխարհից:

Յունվար, 1886.

Ռ. Մ. Խ. Ի ն.

Ծաղիկ—զաւակ սիրուն ու ժիր
 Հարաւի ջերմ վայրերի—
 Փոխազըրված օտար երկիր,
 Թառամում էր խուլ մենի:
 Օտար քամու փաղաքշանքներ,
 Օտար ջրով զով հոսանքներ
 Չէին նրբան փթթեցնում
 Եւ արևի ճառագայթներ

Ենդօր էին նրան թրուում:
 Եւ գլխիկոր՝ երազում էր
 Նա այլ վայրեր սիրելի,
 Նրանց թռչնակի քաղցրը երգեր,
 Նրանց վըտակի մեղմ մրմունջներ,
 Նրանց գեղութիւն կենդանի:
 Բայց մէկ օր նա խընամատար
 Ձեռով հարաւ տարվեցաւ
 Եւ հարազատ, գեղեցկափառ
 Բնութեան գրկում ջերմ, խանդավառ
 Նա վերստին փթթեցաւ....

Եյդպէս և դու, և դու, ընկեր,
 Հեռու երկրից հայրենի,
 Մաշվում էիր արտասոււաբեր
 Օտարութեան մէջ մենի:
 Ո՛չ մեծութիւնն օտար երկրի,
 Ո՛չ նրա փառքն ու ցնծութիւն,
 Ո՛չ նրա դոված քաջութիւն
 Ձէին գրաւում սիրտդ տխրալի,
 Որ միշտ սլանում էր հեռուն:....
 Եւ ծանրացած դառն մտածման
 Ու զգացման տակ խռովարար,
 Եյլ վայր էիր, վայր տրամական
 Գու երազում ցաւով անձայն,
 Նրան փափազում անդադար....
 Եւ վերջապէս աստղը ժպտաց
 Եւ հտաբեր քեզ շողովի
 Պարզվեց դէմքը քո տրխրամած.—
 Ո՛վ մայր երկիր, երկիր սիրած,
 Բաց նրան զերկրդ քո գորով....

Յափշտակութեամբ ու հրճուանքով
 Շատ-շատերին անձանօթ,
 Ժողովըրդին ընկեր սրտով
 Յայտնըեցար՝ միշտ նրա մօտ:
 Նրա հետ խանդով բաժանեցիր
 Գու քո յոյսեր ու իղձեր,
 Մեծ նըպատակն քո յայտնեցիր,
 Նրա սիրան կայծով բորբոքեցիր,
 Եսիր բազդի զազանիքներ:
 Նըրա վերքը սև ու խորին
 Գու ճեղքեցիր, բաց արևր,
 Ժահրոտ հիւթը քամեցիր,
 Գրեցիր փրկիչ ըսպեղանին,
 Գեղ ապազայ ցոյց տըւիր:
 Եւ ցաւատանջ ժամին խեղձի,
 Նրա վհատութեան ժամանակ,
 Եւ րօպէին նրա կատաղի
 Գու միշտ ներկայ—սիրող հրալի,
 Որպէս արծիւ համարձակ....

1890.

Վ Ե Ր Չ.



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Չօն.	3
Վաղուց մոռցված մէկ անկիւնում.	9
Հայաստան.	11
Սիրտ իմ չարչարված, մի յանդիմանիր	12
Օտար անձին	14
29 մարտ 1887 (Ը. Մ.)	15
Պօէտ	17
Ինքֆրաու.	18
Ը. Մ. Վ.	20
Հատուած	21
Գաշոյն	22
Ես փակված իմ սենեակում.	24
Ես լալես էի առանց արցունքի.	25
Գիշերային երեւոյթ	26
Ը. Մ. Ն.	28
Sonnet	29
ԸՏ, վաղուց է տրամոլթեանս իմ աղբիւր	30
Լուսիկին	33
Երտաւազդ.	34
Ը. Մ. Վ.	36
Ը. Մ.	37
Լէման	38
Ո՛չ, այդ քե՛զ չէ, որ սիրում եմ կաթոգին	42
Ո՛չ, այդ քե՛զ չէ, որ սիրում եմ կաթոգին	43
Ը. Մ. Ինէս.	44
Հատուած «Գիւղացի» պօէմայից.	44
Սոճ.	50
Սոճ.	51
Կեանք և մահ. ապրե՞լ. և ինչո՞ւ համար	54
Գետակն աղմըկում գեղանիստ հովտում.	55
Մ. -ին.	

Այո՛, երջանիկ ենք մենք, իմ անգին 57

Յէվարի 58

Նրանց ճակատագիրը 62

Արծիւը 63

Աղքատի բաժին 65

Քայլեր, թափառող, մշտաշարժ քայլեր 68

Լուռ է գիշերն, խաճայն անձրև է գալիս 69

Հայրենիք 71

Արևոյթ 80

Մեղամաղձ ասորդ, ասորդ երկնային 83

Լըռի՛ր, լըռի՛ր, անմիտ, յանդ՛ուզըն երգիչ 84

Արկու պատկեր 85

Ամբոխը (Բաֆֆի յիշատակին) 88

Հովասար 90

Մարգարէ 91

Ո՛չ, մի՛ աշխատիր ինձ մըլխիթարել 93

Ինչո՞ւ սրտիս իմ իղձը լուռ 94

Ինչո՞ւ քեզ տխրել առանց պատճառի —

Արգիշը 95

Մուզան, Բանաստեղծը և Հրապարակախօսը 96

Օր. Մ. Տ. Մ.—ի յիշատակին 113

Եղբայր իմ, եղբայր իմ 114

Միայն մի գիշեր 115

Մանկան 123

Մեր սերունդը 125

Հատուած, «Աւագակը» պօէմայից 127

Արմաւենի 132

Բանաստեղծը 133

31 գեկտեմբերի 188 134

Հատուած, «Յովնան» դրամատիկական պօէմայից 136

Ո. Մ. Խ.—ին 141

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ.	Տող.	Տպագրութիւն.	Պետք է լինի.
21	3	Հէգ	վեհ
39	3	Որպէս ժպտուն, հուլունք տխրած	Որպէս ժպտուն հուլունք, տխրած
44	5	անձից	անձից.
51	2	Ամպերը նրան գրկում,	Մերթ ամպերն նրան գրկում,
70	2	զըթալից,	զըթալից
82	13	Սո՛ւթ	Մո՛ւթ
112	7	տիւրունակ	տխրունակ:





